«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«22» օգոստոսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Աղաբեկյան Անուշ
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահի ընտրություն և կազմի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
3. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. 1-ին և 4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. «Տարրական կրթության մեթոդմիավորման» 2025-2026 ուսումնական տարվա ժամաբաժանման հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. Տարրական կրթության առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. Ըստ նոր ՀՊՉ-ների 1-4 դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
10. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
11. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման նախնական քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

12. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

13. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի «Ուսումնական բացերի հաղթահարում և բարեկեցության խթանում» ծրագրի ներդրման մասին:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահի ընտրություն և կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը առաջարկեց փոփոխություն չկատարել և Տարրական կրթության մեթոդմիավորման նախագահ թողնել Ռիտա Շալունցին՝ նկատի ունենալով նրա արդյունավետ աշխատանքը և փորձը մեթոդմիավորման գործունեության կազմակերպման մեջ: Նա հավելեց, որ «Տարրական կրթության մեթոդմիավորման» կազմում ընդգրկված են բոլոր 12 դասվարները, ովքեր ակտիվորեն մասնակցում են առարկայական քննարկումներին, փորձի փոխանակման և ուսուցման որակի բարձրացման գործընթացներին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Վ. Գրիգորյանը, Կ. Պողոսյանը

Արտահայտվողներն առաջարկեցին անփոփոխ թողնել «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահին և 2025-2026 ուսումնական տարում ևս հաստատել Ռիտա Շալունցի թեկնածությունը՝ հաշվի առնելով նրա արդյունավետ գործունեությունը, պատասխանատվությամբ ու նախաձեռնությամբ իրականացված աշխատանքները նախորդ ուսումնական տարում, ինչպես նաև մեթոդմիավորման աշխատանքների կազմակերպմանն ու համակարգմանն ուղղված ներդրումը:

Որոշեցին՝ «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահ ընտրել Ռիտա Շալունցին և հաստատել մեթոդմիավորման նոր կազմը՝ ընդգրկելով բոլոր դասվարներին:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարում «Տարրական կրթության մեթոդմիավորման» գործունեությունը՝ ընդգծելով իրականացված աշխատանքների կարևորությունը, ձեռքբերումներն ու հաջողությունները: Նշվեց, որ մեթոդմիավորման անդամները տարեսկզբից մինչև ուսումնական տարվա ավարտ հանդես են եկել նախաձեռնություններով, ակտիվորեն մասնակցել մասնագիտական քննարկումներին և փորձի փոխանակման գործընթացներին:

Այնուհետև կայացավ արդյունավետ քննարկում՝ նվիրված անցած ուսումնական տարվա արդյունքներին, ձեռքբերումներին և բացթողումներին: Մասնակիցները համատեղ վերլուծեցին կատարված աշխատանքները, առանձնացրին բարելավման ենթակա ուղղությունները և ներկայացրին առաջարկներ նոր ուսումնական տարվա անելիքների վերաբերյալ: Քննարկվեցին նաև առաջիկա փոփոխություններին ու նոր մոտեցումների ներդրմանը վերաբերող մի շարք կարևոր հարցեր:

Արտահայտվեցին՝ Ն. Գալստյանը, Ա. Աղաեկյանը, Կ. Մալխասյանը

Գալստյանը նշեց, որ մեթոդմիավորման աշխատանքները կազմակերպվում են համակարգված ձևով, և հաճախ իրականացվում են միասնական քննարկումներ՝ ուղղված խնդիրների վերհանմանը և լավագույն փորձի փոխանակմանը։

Արտահայտվողները, հիմք ընդունելով «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահի ներկայացրած հաշվետվությունը, ինչպես նաև 2024-2025 ուսումնական տարում կատարված աշխատանքների արդյունքները, ընդգծեցին, որ թեև առկա են որոշ բացթողումներ, ընդհանուր գործունեությունը եղել է արդյունավետ և նպատակային։ Այս հիմքով առաջարկվեց մեթոդմիավորման աշխատանքը գնահատել «լավ»։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական կրթության մեթոդմիավորման» 2024-2025 ուսումնական տարվա կատարողականը։

Լսեցին 4. 1-ին և 4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում։

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025-2026 ուսումնական տարում նոր Հայցված պետական չափորոշիչների (ՀՊՉ) հիման վրա ուսուցումը կիրականացվի նաև 1-ին և 4-րդ դասարաններում։ Այս համատեքստում նա կարևորեց ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը՝ ընդգծելով անհրաժեշտությունը մինչև դասերի մեկնարկը քննարկելու առաջացած հարցերը, մանրամասն ուսումնասիրելու երաշխավորված դասագրքերն ու ծրագրերը՝ կանխելու հնարավոր դժվարություններն ու ապահովելու ՕԹՊ-ների ճիշտ կազմումը։

Արտահայտվեցին՝ Կ. Մալխասյանը, Գ. Ավագյանը, Ռ. Շալունցը։

Արտահայտվողները կարևորեցին նախորդ ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներն ու դրանց արդյունքների ամփոփումը՝ կապված 2-րդ և 3-րդ դասարաններում նոր Հանրակրթական պետական չափորոշիչների (ՀՊՉ) հիման վրա իրականացված ուսումնական գործընթացի հետ։ Նշվեց, որ այդ փորձը նպաստեց նոր մոտեցումների արդյունավետ կիրառմանը և ուսումնական ծրագրերի բարելավմանը։

Ռիտա Շալունցը հավելեց, որ նախորդ տարիների ընթացքում կատարված հետևողական աշխատանքներն ու ձեռք բերված փորձը հնարավորություն են տալիս առավել հեշտությամբ իրականացնել անհրաժեշտ փոփոխությունները և ժամանակին հաստատել թեմատիկ պլանները։

Գայանե Ավագյանը և Կարինե Մալխասյանը առաջարկեցին կազմակերպել աշխատանքների հստակ բաժանում զուգահեռ դասարանների դասվարների միջև՝ ապահովելով համագործակցային մոտեցում, և սկսել նոր ՀՊՉ-ով թեմատիկ պլանների կազմման գործընթացը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 1-ին և 4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի մասին քննարկման արդյունքները։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա «Տարրական կրթության մեթոդմիավորման» ժամաբաժանման քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2024-2025 ուսումնական տարվա վերջին նիստի ընթացքում ներկայացվել և քննարկվել է «Տարրական կրթության մեթոդմիավորման» կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը։ Նա կարևորեց այս գործընթացը՝ նշելով, որ ժամաբաժանման ճիշտ, հավասարակշռված և նպատակային բաշխումը կարևոր նախապայման է արդյունավետ ու շարունակական ուսումնական գործընթացի կազմակերպման համար։

Քննարկման ընթացքում ներկայացվել և ուսումնասիրվել են տարբեր առաջարկներ, լսվել մեթոդմիավորման անդամների դիտարկումները և մասնագիտական կարծիքները։ Նիստի ավարտին ամփոփվել են հիմնական նկատառումները, որոնց հիման վրա նախատեսվում է անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ապահովելու ուսումնական ծրագրերի առավել արդյունավետ իրականացումը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Աղաբեկյանը, Կ. Պողոսյանը։

Սերգեյ Ավանեսյանը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը, մանրամասն ներկայացրեց առարկայացանկը, շաբաթական ժամերի առավելագույն քանակը։ Սերգեյ Ավանեսյանը նաև խոսեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին, առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

Սերգեյ Ավանեսյանն առաջարկեց նաև 1-9-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը

- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։

նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Որոշեցին՝

1. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է)։
2. Դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
   - 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
   - 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
   - 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
   - 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։
3. Անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
   - 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական)

բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։

- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Լսեցին 6. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը՝ ընդգծելով դրանով նախատեսված հիմնական ուղղությունները և կատարելիք

աշխատանքները: Նա նշեց, որ բոլոր օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են առարկայական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ ապահովելով ուսումնական գործընթացի համակարգված և նպատակային կազմակերպումը:

Ջեկուցողը հավելեց, որ արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները մշակվել են ուսուցիչների կողմից՝ հիմք ընդունելով համապատասխան խմբակների հաստատված ծրագրերը:

Նա նաև նշեց, որ բոլոր առարկաների թեմատիկ պլանները մշակվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 14-ի N 64-Ն հրամանի պահանջներին համապատասխան, համաձայն որի՝ յուրաքանչյուր թեմայի և դասի համար ավելացվել են հստակ ձևակերպված նպատակներ և վերջնարդյունքներ, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը և վերահսկել դրա արդյունավետությունը:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը, Տ. Փարսադանյանը, Կ. Մալխասյանը:

Արաքսյա Առստամյանը ներկայացրեց օրացուցային-թեմատիկ պլանները կազմելիս հաշվի առնելու բոլոր պահանջները: Նա նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններում օրերը անհրաժեշտ է նշել միայն առաջին կիսամյակի համար, իսկ նշումները կատարել մատիտով՝ ապահովելու հետագա փոփոխությունների և շտկումների հնարավորությունը:

Ռիտա Շալունցը հավելեց, որ ՕԹՊ-ները կարելի է կազմել առաջնորդվելով առարկայական ծրագրերով և հիմք ընդունելով դպրոցում կիրառվող դասագրքերը, ինչը կպահպանի ծրագրի համապատասխանությունը և ուսուցման արդյունավետությունը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, ուսումնական պլանը, օրացուցային-թեմատիկ պլանները, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները:

Լսեցին 7. Տարրական կրթության առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Ջեկուցողը ընդգծեց գործնական և գրավոր աշխատանքների կարևորությունը՝ նշելով, որ դրանք ուսուցման գործընթացում ունեն գնահատման, գիտելիքների ստուգման և աշակերտների առաջադիմությունը վերլուծելու նշանակալի դեր:

Նա նշեց, որ անհրաժեշտ է ապահովել այդ աշխատանքների անաչառ և օբյեկտիվ անցկացումը՝ պահպանելով միասնական մոտեցումներ բոլոր դասարաններում:

Նա նաև նշեց, որ յուրաքանչյուր կիսամյակում մեկ գործնական աշխատանքի անցկացումը պարտադիր է լինելու՝ ապահովելու տեսական գիտելիքների կիրառումն ու ուսուցման արդյունքների լիարժեք գնահատումը:

Արտահայտվեցին՝ Կ. Պողոսյանը, Ս. Ավանեսյանը, Ա. Աղաբեկյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ինչպես նախորդ ուսումնական տարում, այնպես էլ 2025-2026 ուսումնական տարում անհրաժեշտ է պահպանել նույն մոտեցումը. 1-9-րդ դասարանների բոլոր գրավոր, գործնական աշխատանքները, ինչպես նաև հայտորոշիչ և ձևավորող թեստերը պետք է նախապես հաստատվեն համապատասխան մեթոդական միավորումների կողմից, և միայն դրանից հետո կիրառվեն ուսումնական գործընթացում:

Նա հիմնավորեց այս պահանջը այն հանգամանքով, որ նման ձևաչափը հնարավորություն է տալիս ապահովել միասնական մոտեցում, ինչը կարևոր է զուգահեռ դասարաններում նույն առարկաներով նույնաբովանդակ աշխատանքների կազմակերպման համար: Սա, իր հերթին, թույլ կտա

հավասար պայմաններում գնահատել աշակերտների գիտելիքները և ապահովել դասարանների միջին որակական ցուցանիշների ավելի ճշգրիտ և օբյեկտիվ հաշվարկ։

Որոշեցին՝ Ապահովել ուսումնական տարվա ընթացքում սահմանված գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակը (կցվում է), ինչպես նաև 2025-2026 ուսումնական տարվա բոլոր առարկաներից տրվող գործնական աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը հաստատել մեթոդմիավորման կողմից, որից հետո կիրառել (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 8. Ըստ նոր ՀՊՉ-ների 1-4-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյանը)

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2025-2026 ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում՝ 1-4-րդ դասարաններում, աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան։ Ըստ այդ չափանիշների 2025-2026 ուսումնական տարում 1-4-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից։ Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում։

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.

8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը

Արտահայտվողը նշեց, որ նախորդ տարի նույնպես նոր ՀՊՉ-ներով ուսուցանվող 2-րդ և 3-րդ դասարաններում կիրառվել են բնութագրիչներով գնահատումը: Արտահայտվողն առաջարկեց ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, այս ուսումնական տարվա ընթացքում նույնպես ձեռքի

տակ ունենալ Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և ըստ անհրաժեշտության օտգվել դրանից՝ պահպանելով համապատասխան սկզբունքները, ինչպես նաև առաջարկեց հավանության արժանացնել առաջարկվող ձևերն ու մեթոդները և սույն հարցը քննարկել նաև մանկավարժական խորհրդի նիստում։

Որոշեցին՝ Հաստատել նոր ՀՊՉ-ների համաձայն 1-4-րդ դասարաններում գնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ինչպես նաև «Տարրական կրթության մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2025-2026 ուսումնական տարում 1-4-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից։ Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)

12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 40-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 9. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածություն:

(զեկուցող՝ Ա.Առստամյանը)

Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն իրականացվում է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.

2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա, ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին ուսումնական գործընթացում անհատական մոտեցման ապահովումը՝ նշելով, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետ մնացող աշակերտներին: Նրանք առաջարկեցին ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից ցածր արդյունքներ գրանցած աշակերտներին ներառել երկարօրյա խմբերում:

Նման քայլը, ըստ նրանց, կնպաստի այդ աշակերտների ուսումնառական բացերի լրացմանը, գիտելիքների ամրապնդմանը և ուսումնական առաջադիմության բարձրացմանը՝ ապահովելով բոլոր երեխաների հավասար մասնակցությունը և հաջողությունը կրթական գործընթացում:

Որոշեցին՝ Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

Լսեցին 10. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, 2025-2026 ուսումնական տարում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող հիմնական աշխատանքները, այդ աշակերտների համար պարզեցման եղանակները, ինչպես նաև կոնկրետ օրինակներով ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացումը: Զեկուցողը նշեց նաև, որ 2025-2026 ուսումնական տարվա

մեկնարկին դպրոցն ունի 18 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որոնց հետ աշխատանքն անհրաժեշտ է իրականացնել հատուկ սահմանված կարգով: Ջեկուցողն առանձին-առանձին անդրադարձ կատարեց բոլոր աշակերտներին և նշեց նրանց հետ իրականացվող աշխատանքների գրաֆիկը:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքները դպրոցում մշտապես կազմակերպվել են պատշաճ մակարդակով, և նախորդ ուսումնական տարին ևս դրանում բացառություն չի եղել: Նա առանձնահատուկ ուշադրություն դարձրեց ծանր խնդիրներ ունեցող աշակերտներին, որոնց հետ աշխատանքը պահանջում է հատուկ մասնագիտական հմտություններ, հետևողական մոտեցում և համագործակցային աշխատանք:

Արտահայտվողը կարևորեց, որ անհատական ուսուցման պլանները (ԱՈՒՊ) լրացվեն նոր կարգին համապատասխան՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ աշակերտի կարողությունները, ընդունակությունները և զարգացման դինամիկան:

Սերգեյ Ավանեսյանը նաև ընդգծեց դիտարկման թերթիկների պատշաճ լրացման, ինչպես նաև ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժի և հոգեբանի համատեղ աշխատանքի կարևորությունը՝ կրթական ներառական գործընթացը առավել արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան, սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

Լսեցին 11. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Ջեկուցողը կարևորեց ցուցադրական դասերի և դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտությունը՝ նշելով, որ դասի այս տիպերը ունեն ուսուցանող և օրինակելի բնույթ: Դրանք հնարավորություն են տալիս ներկայացնելու դասապրոցեսի կազմակերպման լավագույն մոտեցումները, որտեղ մանրամասնորեն հաշվարկված են դասի բոլոր փուլերն ու տարրերը՝ նպաստելով մասնագիտական զարգացմանը և փորձի փոխանակմանը:

Նա ընդգծեց նաև բաց դասերի կազմակերպման կարևորությունը՝ նշելով, որ դրանց միջոցով ստեղծվում է հարթակ ուսուցիչների ձեռք բերած դրական փորձի տարածման, նոր մեթոդների կիրառման և արդյունավետ դասավանդման ձևերի մասայականացման համար:

Ջեկուցողը ներկայացրեց բաց դասերի, դաս-միջոցառումների և կրթական միջոցառումների ժամանակացույցի նախագիծը՝ առաջարկելով դրանք իրականացնել ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ թեմատիկ ուղղությունների և առարկայական ոլորտների:

Արտահայտվեցին՝ Կ. Մալխասյանը, Ռ. Շալունցը:

Արտահայտվողներն առաջարկեցին, որ ինչպես նախորդ ուսումնական տարում, 2025-2026 ուսումնական տարում ևս շարունակվի նույն արդյունավետ մոտեցումը՝ ցուցադրական և բաց դասերը, ինչպես նաև բաց դաս-միջոցառումները կազմակերպելով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Նրանք ընդգծեցին, որ նման ձևաչափը ապահովում է ծրագրավորված և համակարգված աշխատանք, նպաստում է ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, փոխադարձ փորձի փոխանակմանը և լավագույն մեթոդական փորձի տարածմանը դպրոցում:

Որոշեցին՝ «Տարրական կրթության մեթոդմիավորման» անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն (կցվում է):

Լսեցին 12. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2021-2022 ուսումնական տարվանից սկսած՝ դպրոցում դասալսումների, այդ թվում՝ փոխադարձ դասալսումների գործընթացը կազմակերպվում է համակարգված ձևով: Բոլոր դասալսումները արձանագրվում են հատուկ ձևավորված արձանագրությունների թղթերում, որտեղ հստակ սահմանված են չափանիշներ՝ դասապրոցեսի գնահատման և վերլուծության համար:

Արաքսյա Առստամյանը հավելեց, որ օգտագործվող արձանագրության ձևանմուշը լիովին համապատասխանում է գործող կարգի պահանջներին: Նա առաջարկեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ կազմակերպել առնվազն երեք դասալսում յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներ, որոնք պետք է իրականացվեն դպրոցի հաստատված ձևանմուշների հիման վրա:

Նա նաև նշեց, որ դասալսումների արդյունքները պարտադիր է արձանագրել սահմանված ձևանմուշներում և կիսամյակի ավարտին՝ սահմանված կարգով արխիվացնել, ինչը կապահովի գործընթացի թափանցիկությունը և կօգնի շարունակաբար բարելավել դասավանդման որակը:

Արտահայտվեցին՝ Գ. Ավագյանը, Ռ. Շալունցը:

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ երկու ուսումնական տարիների ընթացքում դասալսումների գործընթացում ձեռք բերված փորձը տվել է դրական արդյունքներ և ապահովել է աշխատանքների բարձր արդյունավետություն: Նրանք ընդգծեցին, որ այդ մոտեցումը նպաստել է դասավանդման որակի բարձրացմանը, փորձի փոխանակմանը և ուսումնական գործընթացի շարունակական զարգացմանը:

Հաշվի առնելով ստացված արդյունքներն ու ձևավորված արդյունավետ փորձը՝ արտահայտվողները նպատակահարմար համարեցին 2025-2026 ուսումնական տարում ևս պահպանել նույն սկզբունքը՝ դասալսումները կազմակերպելով նույն ձևաչափով և սահմանված կարգին համապատասխան, ինչը կօգնի ապահովել ուսուցման որակի կայուն բարձրացում:

Որոշեցին՝ 2025-2026 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում դպրոցի կողմից մշակված ձևաթղթով, այդ թվում՝ փոխադարձ դասալսում: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհրդի ամփոփիչ նիստում:

Լսեցին 13. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի «Ուսումնական բացերի հաղթահարում և բարեկեցության խթանում» ծրագրի ներդրման մասին:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ծրագրի ներդրման կարևորությունն ու նպատակները՝ մասնակիցներին հիշեցնելով նախնական հանդիպման ընթացքում քննարկված բոլոր կետերը և ընդգծելով դրանց իրագործման փուլերը:

Նա տեղեկացրեց, որ ծրագրի առաջին փուլը կիրականացվի 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ ընդգրկելով 2-4-րդ դասարանները, սակայն հնարավոր է, որ երկրորդ կիսամյակում ծրագրին

միանան նաև 1-ին դասարանների աշակերտները։ Յուրաքանչյուր դասարանից ծրագրում կմասնակցի մինչև 15 աշակերտ՝ ըստ նախապես ձևավորված խմբերի։

Զեկուցողը նշեց, որ աշխատանքներն իրականացվելու են Աստղիկ Բալայանի և նրա ղեկավարած խմբի կողմից մշակված ուսուցողական նյութերով։ Նա կարևորեց նաև ծրագրի կողմից տրամադրված ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործումը՝ դրանք տարիքային խմբերի միջև ճիշտ բաշխելով, որպեսզի յուրաքանչյուր խումբ ստանա իր ուսումնական մակարդակին և զարգացման աստիճանին համապատասխան նյութեր։

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Կ. Մալխասյանը

Շալունցը նշեց, որ թույլ կարողություններ ունեցող աշակերտների հետ դասաժամերի ընթացքում միշտ չէ, որ հաջողվում է իրականացնել այնպիսի անհատական աշխատանք, որը կարող է նպաստել նրանց ակնհայտ առաջընթացին։ Նա ընդգծեց, որ նման աշակերտների հետ նյութի լրացուցիչ կրկնումը, բացերի լրացումը և նպատակային մոտեցումը անպայման կտա դրական արդյունք՝ բարելավելով նրանց ուսումնական առաջադիմությունը։

Մալխասյանը, իր հերթին, նշեց, որ հատկապես 4-րդ դասարանում կան թեմաներ, որոնց յուրացումը պահանջում է ավելի երկարատև և բազմակի աշխատանք։ Թույլ կարողություններ ունեցող աշակերտները, ըստ նրա, հաճախ կարիք ունեն նույն նյութը մի քանի անգամ լսելու, այն տարբեր ձևաչափերով վերլուծելու և գործնական կիրառելու, որպեսզի կարողանան լիարժեք հասկանալ և ամրապնդել ձեռք բերված գիտելիքները։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի «Ուսումնական բացերի հաղթահարում և բարեկեցության խթանում» ծրագրի մասին զեկուցումը։

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«29» սեպտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները:

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Աղաբեկյան Անուշ
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման և թեմատիկների գրանցման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. 1-ին և 4-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ով դասավանդման խնդիրները:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացում:
(զեկուցող՝ Ա.Ծատրյան)
6. I դասարաններում՝ «Ա»-ի ուսուցման դասերի կազմակերպում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները,

անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ռ. Շալունցը :

Արտահայտվողները նշեցին, որ ՕԹՊ-ները և ԹԳ-ները համապատասխանում են բոլոր պահանջներին:

Ռիտա Շալունցը, ևս մեկ անգամ, 1-ին և 4-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչներին ներկայացրեց նոր չափորոշիչներին համապատասխան էլեկտրոնային մատենավարության վերաբերյալ կետերը, բնութագրիչների ընտրության և պահպանման կարգը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման և թեմատիկ պլանավորումների գրանցման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված նոր պահանջներն ու կանոնները՝ մանրամասն բացատրելով թեմատիկ պլանների կցման և թեմաների էլեկտրոնային մատյաններում մուտքագրելու կարգը: Նշվեց նախկինում թույլ տված թերությունները, և ընդգծվեց, որ գրանցումները անհրաժեշտ է կատարել ժամանակին՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

Նա հավելեց, որ բոլոր թեմատիկ պլանավորումները պետք է համապատասխան կերպով կցվեն էլեկտրոնային մատյաններին, ինչը կլրացնի փաստաթղթային արձանագրումն ու կապահովի ուսուցողական գործընթացի վերահսկելիությունն ու հաշվետվողականությունը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Ավանեսյանը նշեց, որ արդեն որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավարության հետ կապված խնդիրներ՝ հատկապես էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետների խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին և որոշ աշակերտների գնահատականների բացակայություն: Նա հորդորեց ուսուցիչներին լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ ձևով՝ ապահովելով ուսումնական գործընթացի անխափան իրականացումը:

Ավելին, Ավանեսյանը հանձնարարեց մեթոդմիավորման նախագահին իրականացնել ամենշաբաթյա ստուգումներ՝ մատյանների և թեմատիկ պլանների լիազորությունների համապատասխանության համար, և ստացված ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մաս՝ վերահսկողությունը և հաշվետվողականությունը բարձրացնելու նպատակով:

Որոշեցին՝ Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական մաս:

Լսեցին 4. 1-ին և 4-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ով դասավանդման խնդիրները:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին մասնակցել են դպրոցի բոլոր դասվարները, ինչի արդյունքում 1-ին և 4-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները ծանոթ են բոլոր նոր փոփոխություններին և նորամուծություններին:

Նա նաև անդրադարձավ որոշ առկա խնդիրների, որոնք նկատվել են ուսուցման ընթացքում, և առաջարկեց նման դեպքերում անմիջապես դիմել մեթոդմիավորման նախագահին՝ խնդիրները ժամանակին լուծելու և ուսումնական գործընթացի անխափան իրականացումը ապահովելու նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշել են, որ 1-4-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները կրթական գործընթացում մեծ խնդիրների չեն հանդիպել և հմուտ կերպով կարողանում են համատեղ քննարկումների միջոցով գտնել լուծումներ: Միաժամանակ նրանք ընդգծել են, որ անհրաժեշտության դեպքում պարտադիր դիմում են մեթոդմիավորման նախագահին կամ Սերգեյ Ավանեսյանին՝ ստանալու համապատասխան խորհրդատվություններ և աջակցություն, ինչը ապահովում է ուսումնական գործընթացի անխափան ու արդյունավետ իրականացումը:

Որոշեցին՝ 1-ին և 4-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ով դասավանդման խնդիրների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 5. ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչ-ուսուցչի օգնական-հատուկ մանկավարժ-հոգեբան համագործակցության դերը ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում և ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարում տեղի ունեցած փոփոխությունները:

Նա ընդգծեց ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ աշխատանքը, ներկայացնելով ԱՈՒՊ-ների լրացման ընթացքը ուսումնական տարվա սկզբից սկսած: Զեկուցողը նշել է, որ նոր ԱՈՒՊ-ների լրացումը աշխատատար չէ և ուսուցիչները բավականին արագ կարողանում են սահմանել իրենց նպատակները՝ ապահովելով անհատականացված ուսուցում:

Բացի այդ, նա բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսուցիչ-ծնող համագործակցության կարևորության վրա: Զեկուցողը առաջարկեց հաճախակի կազմակերպել քննարկումներ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ծնողների միջև՝ ապահովելու առաջացած հնարավոր խնդիրների ժամանակին հայտնաբերումն ու արդյունավետ լուծումը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ հաճախակի հանդիպում են դժվարությունների ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ աշխատանքի ընթացքում, որոնք կապված են ուշ գնահատման, խնդիրների հայտնաբերման և աշակերտների առանձնահատուկ կրթական կարիքների հետ: Նշվեց, որ որոշ ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ աշխատանքը բարդ է ոչ միայն ուսուցչի, այլ նաև ուսուցչի օգնականի համար:

Արտահայտվողներն առաջարկեցին ավելի սերտորեն համագործակցել ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ, որպեսզի տվյալ աշակերտներին հնարավոր լինի առավել ակտիվորեն ներգրավել դասապրոցեսում և ապահովել նրանց ուսուցումը՝ համաձայն անհատական ուսուցման պլանների և օրվա դասի պլանով սահմանված նպատակների:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն զեկույցը, ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել հանդիպումներ ուսուցիչ-ուսուցչի օգնական-հոգեբան-հատուկ մանկավարժ ձևաչափով:

Լսեցին 7. I դասարաններում՝ «Ա»-ի ուսուցման դասերի կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ I դասարաններում «Ա» տառի և հնչյունի ուսուցման դասերը, ինչպես նաև այբբենական շրջանի մուտքը անհրաժեշտ է կազմակերպել տպավորիչ ձևով՝ նպատակ ունենալով աշակերտների մոտ ձևավորել հետաքրքրություն և ոգևորություն տառուսուցման շրջանի նկատմամբ:

Արտահայտվեցին՝ Գ. Ավագյան, Վ. Գրիգորյան, Ա. Հարությունյան

Դասվարներն իրենց ելույթում նշել են, որ դաս-միջոցառումները նախատեսված են անցկացնել առանց ավելորդ ճոխությունների՝ ներառելով երգ, բեմականացում, արտասանություններ և հաղորդման դաս, ինչպես նաև «Ա» տառի ուսուցումը կազմակերպել առավել հետաքրքիր ու ներգրավող ձևով։
Ավագյանը, իր հերթին, նշեց, որ իր դասը՝ «Երդվում եմ» խորագրով, միայն «Ա»-ի շնորհանդես չի լինելու, այլ ծառայելու է որպես երդում բոլոր սրբություններին և ուսման մեջ առաջադիմության ու պարտաճանաչ լինելու սկզբունքին ուղեկցելու նպատակով։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն I դասարաններում՝ «Ա»-ի ուսուցման դասերի կազմակերպման մասին զեկուցումը։

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում սեպտեմբեր ամսվա ընթացքում նախատեսված և իրականացված միջոցառումները։ Նա ընդգծեց, որ ինչպես սեպտեմբեր, այնպես էլ նախորդ՝ օգոստոս ամսվա ընթացքում, բոլոր պլանային աշխատանքները կատարվել են սահմանված կարգով՝ համաձայն հաստատված ժամանակացույցի և նախանշված նպատակների։
Բոլոր ծրագրավորված գործողությունները իրականացվել են համակարգված, նպատակային և համագործակցային ձևով՝ ապահովելով ուսումնական տարվա արդյունավետ մեկնարկը, կրթական գործընթացի համաչափ կազմակերպումը և ուսուցման միջավայրի բնականոն զարգացումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված բոլոր գործողություններն ու միջոցառումները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ և ժամանակին։ Նրանք ընդգծեցին, որ աշխատանքների իրականացման ընթացքում բացթողումներ կամ թերակատարումներ չեն արձանագրվել, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում, ինչը ապահովել է պլանի արդյունավետ և նպատակային իրականացումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«23» հոկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները:

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Աղաբեկյան Անուշ
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանում և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպում այդ կարիքները բավարարելու ուղղությամբ:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանման և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպման, այդ կարիքները բավարարելու ուղղությամբ հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ելույթում ընդգծեց սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանման և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպման կարևորությունը: Նա նշեց, որ սկսնակների կարիքները ճշգրիտ հասկանալու համար անհրաժեշտ է իրականացնել դասալսումներ, կազմակերպել կլոր սեղանի շուրջ քննարկումներ, ինչպես նաև ապահովել համապատասխան խորհրդատվություններ ու օրինակների միջոցով լրացնել նրանց փորձի պակասը:

Արտահայտվեցին՝ Անուշ Աղաբեկյանը:

Աղաբեկյանը սկսնակ ուսուցիչներին հորդորեց օրվա ընթացքում ազատ ժամերը օգտագործել դասալսումների կազմակերպման համար՝ ինչպես զուգահեռ դասարաններում, այնպես էլ փորձառու ուսուցիչների մոտ, որպեսզի նրանք հնարավորություն ստանան ձեռք բերել նոր գիտելիքներ, դիտարկել լավագույն պրակտիկան և լրացնել իրենց փորձի պակասը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն սկսնակ ուսուցիչների կարիքների վերհանման և փորձառու ուսուցիչների խորհրդատվության կազմակերպման, այդ կարիքները բավարարելու զեկուցումը:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված նախորդ ուսումնական տարվա ընթացքում արձանագրված թերությունները և ընդգծեց, որ գրանցումները անհրաժեշտ է կատարել ժամանակին՝ հետագա խնդիրներից խուսափելու և ուսումնական գործընթացի անխափան իրականացումն ապահովելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Ս.Ավանեսյանը

Ավանեսյանը նշեց, որ թեմաների լրացման նոր սկզբունքները սկզբում ժամանակատար են, սակայն հետագայում դրանց կրկնակի կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ համակարգում ներբեռնված թեմատիկ պլանները մշտապես պահպանվում են: Նա հորդորեց ուսուցիչներին լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ ձևով:

Նրա առաջարկով՝ մեթոդմիավորման նախագահը պետք է իրականացնի ամենշաբաթյա ստուգումներ և ստացված ամփոփ տվյալները ներկայացնի ուսումնական բաժինին՝ վերահսկողությունն ու հաշվետվողականությունը ապահովելու նպատակով:

Որոշեցին՝ Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել Սերգեյ Ավանեսյանին:

Լսեցին 5. 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ Տարրական կրթության ու մյուս մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, դասերի դիտարկումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 1-4-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ և օրվա դասի պլանի մեջ, և թեմատիկ պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը: Օրվա դասի պլանի գործընթացի քայլերում սահմանված էին այն քայլերը, որոնց համաձայն իրականացվում է դասապրոցեսը: Հստակ նշված էին ռեսուրսներն ու մեթոդները: Զեկուցողը նշեց, որ քանի որ օրվա թեմատիկ պլանի մեջ հստակ սահմանված է տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է:

Զեկուցողը նշեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածությանն ու գնահատման վերաբերյալ հարցերին: Աշակերտների ներգրավվածության հետ զեկուցողը նշեց, որ խնդիրը հիմնականում կապված է այն աշակերտների հետ, որոնք հետ են մնում, շեշտեց, որ այդ աշակերտներն ընդգրկվում են երկարօրյա խմբերում: ԿԱՊԿՈՒ աշակերտների ամբողջական ներգրավվումը դասապրոցեսին իրականացվում է հիմնականում ուսուցչի օգնականների օգնությամբ և նրանց համար սահմանված ԱՈՒՊ-ների համաձայն:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ անհրաժեշտ է կիրառել նախորդ տարվա փորձը, որը թույլ կտա իրագործել գնահատման նոր համակարգի պահանջները, որի արդյունքում կարելի է կիրառել այն ամբողջ գործիքակազմը, որն ընձեռում է հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ գնահատումները:

Զեկուցողն առաջարկեց ուշադրություն դարձնել առարկաների ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին և այս ուղղություններով կազմակերպել քննարկումներ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները համակարծիք են եղել զեկուցողի դիտարկումների հետ և հավելեցին, որ անհրաժեշտ է կազմակերպել քննարկումներ՝ ուսուցիչների ունեցած գիտելիքները բարելավելու, թարմացնելու և պրակտիկայում արդյունավետորեն կիրառելու նպատակով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին զեկուցումը:

Լսեցին 6. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողն առաջարկեց, որ 3-4-րդ դասարաններում տնօրենության կողմից կազմակերպվեն գրավոր աշխատանքներ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից: Նա նշեց, որ աշխատանքները պետք է համապատասխանեն առարկայական չափորոշչային պահանջներին և հանձնվեն բոլոր դասարաններում՝ թեստային տարբերակով:

Զեկուցողը հավելեց, որ 3-4-րդ դասարանների աշակերտները կգնահատվեն միավորային համակարգով, սակայն ստացված գնահատականները չեն փոխանցվի էլեկտրոնային մատյաններին, ինչը թույլ կտա պահպանել

գնահատման գործընթացի համագործություն առանց պաշտոնական հաշվառման։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները առաջարկեցին, որ ինչպես նախորդ ուսումնական տարում, այս տարի ևս 3-4-րդ դասարանների համար կազմվեն ընտրովի առաջադրանքներով աշխատանքների մի քանի տարբերակներ, ինչը հնարավորություն կտա առավել ճկուն կազմակերպել ուսումնական գործընթացը և հաշվի առնել աշակերտների անհատական կարողություններն ու գիտելիքների մակարդակը։

Որոշեցին՝ 1. 3-4-րդ դասարաններում «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝ էլեկտրոնային տարբերակով։

2. Թեստերը կազմել քննարկված պահանջներին համապատասխան։

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ միջոցառումների ամփոփը։ Նա նշեց, որ ամսվա ընթացքում պլանով նախատեսված բոլոր աշխատանքները կատարվել են սահմանված կարգով՝ համաձայն հաստատված ժամանակացույցի և նախանշված նպատակների։

Զեկուցողը շեշտեց, որ միջոցառումները կազմակերպվել են համակարգված, նպատակային և համագործակցային ձևով՝ ընդգրկելով ուսուցիչների, սովորողների և ծնողների ակտիվ մասնակցությունը։ Այս մոտեցումը նպաստել է կրթական գործընթացի շարունակական զարգացմանը, արդյունավետ հաղորդակցությանը և դպրոցի համայնքային կյանքի աշխուժացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ նախատեսված բոլոր միջոցառումները և գործառույթները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ, ժամանակին և արդյունավետ ձևով։ Նրանց խոսքով՝ աշխատանքների իրականացման ընթացքում բացթողումներ կամ թերակատարումներ չեն արձանագրվել, ինչը վկայում է ուսուցիչների բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և մասնագիտական նվիրվածության մասին։

Ավելին, ընդգծվեց, որ մեթոդմիավորման գործունեությունը կազմակերպվել է համագործակցային և ստեղծարար միջավայրում, ինչը նպաստել է փորձի արդյունավետ փոխանակմանը, նոր մեթոդների ներդրմանը և կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը։ Այս մոտեցումը ապահովել է տարեկան պլանի նպատակային և արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև դպրոցի մանկավարժական համայնքի միասնական աշխատանքի ամրապնդմանը ընդհանուր նպատակների շուրջ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«27» նոյեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները:

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Սիմոնյան Աննա
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ռեսուրս կաբինետի աշխատակիցները, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հոկտեմբեր ամսվա կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Տարրական դասարաններում «Աշնան հմայքը» միջոցառման անցկացման մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցություն, ընթացիկ աշխատանքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նոյեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝
Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հոկտեմբեր ամսվա կատարողականի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում: Շեշտվեց, որ աշնանային արձակուրդներից առաջ բոլոր

դասարաններում տրվել են հանձնարարություններ՝ թեմաները ամրապնդելու միտումով:

Արտահայտվեցին՝ Ն. Գալստյան

Նունե Գալստյանը նշեց, որ հատկապես 4-րդ դասարաններում պարտադիր է հանձնարարություններ տալ և ամրապնդել գիտելիքները, քանի որ աշակերտները պետք է պատրաստ լինեն գիտելիքների ստուգմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Տարրական դասարաններում «Աշնան հմայքը» միջոցառման անցկացման մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց, որ միջոցառումն անց է կացվել բոլոր դասարաններում, դասասենյակները ձևավորել էին աշնանային գույներով, աշնանային բերքահավաքի առատ բերք ու բարիքով, գեղեցիկ ձևավորված միրգ ու բանջարեղենով: Աշակերտները ներկայանում էին յուրահատուկ համարներով, գեղեցիկ երգ ու պարով, արտասանությամբ, բեմականացմամբ, նկարների ցուցահանդեսով, շարադրությունների ընթերցմամբ: Որոշ դասարաններ, շենքային պայմանները հաշվի առնելով, միջոցառումն անց էին կացրել բնության գրկում: Միջոցառումները տարբերվող էին և հետաքրքիր:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Ուսուցիչները նշեցին, որ շենքային պայմաններից բխող որոշ սահմանափակումների պատճառով այս տարվա միջոցառումները կազմակերպվել և անցկացվել են ավելի սեղմ ձևաչափով՝ հիմնականում դասասենյակներում կամ բնության գրկում:

Այնուամենայնիվ, հատկապես կարևորվեց, որ յուրաքանչյուր միջոցառում երեխաների համար արժեքավոր է ոչ միայն իր բովանդակությամբ, այլև փոխանցած գիտելիքներով, փորձով և հաղորդակցման նոր ձևաչափերով: Դասարանային միջավայրից դուրս կազմակերպված գործունեությունը նպաստում է երեխաների սոցիալական հմտությունների զարգացմանը, ստեղծում է ազատ ու բաց շփման հնարավորություն և խթանում նրանց հետաքրքրասիրությունն ու ակտիվ մասնակցությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Աշնան հմայքը» միջոցառման անցկացման մասին հաղորդումը:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում իրականացված էլեկտրոնային մատյանների ստուգման արդյունքները՝ մանրամասն անդրադառնալով ինչպես կատարված աշխատանքներին, այնպես էլ արձանագրված թերություններին ու բացթողումներին: Նա հատուկ շեշտադրեց ամփոփիչ աշխատանքների, գործնական հանձնարարությունների և ընթացիկ գնահատականների ժամանակին և լիարժեք ներբեռնման կարևորությունը՝ ընդգծելով, որ նման տվյալների ուշացումը կարող է խաթարել գնահատման գործընթացի շարունակականությունն ու ամբողջականությունը:

Միաժամանակ նշվեցին համակարգի կիրառման ընթացքում ի հայտ եկած մի շարք տեխնիկական խնդիրներ, որոնք որոշ դեպքերում խոչընդոտել են աշխատանքների բնականոն ընթացքը: Զեկուցողը կարևորեց արդեն մուտքագրված և պահպանված գնահատականների պարբերական վերստուգման անհրաժեշտությունը՝ ապահովելու տեղեկատվության ճշգրտությունը, հստակությունը և համապատասխանությունը գործող կարգավորումներին ու սահմանված չափանիշներին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանն իր խոսքում շեշտեց, որ մատենավարության գործընթացում յուրաքանչյուր ուսուցչի անհատական, գիտակցված և պատասխանատու մոտեցումը առաջնահերթ նշանակություն ունի: Նա նշեց, որ իրականացվող ընթացիկ ստուգումների ընթացքում շարունակաբար արձանագրվում են մի շարք թերություններ, որոնք վկայում են արագ արձագանքի, կարգապահության ամրապնդման և աշխատանքային պատասխանատվության բարձրացման անհրաժեշտության մասին:

Ավանեսյանը կոչ արեց առավել հետևողական և կարգապահ լինել տվյալների ժամանակին ու ճիշտ լրացման, գնահատականների պատշաճ փոխանցման, ինչպես նաև էլեկտրոնային մատյանի վարումը սահմանված կարգով և պահանջներին համապատասխան ապահովելու հարցում՝ ընդգծելով, որ մատենավարության որակն անմիջականորեն պայմանավորում է ուսումնական գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և ընդհանուր արդյունավետությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները

Լսեցին 5. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության, ընթացիկ աշխատանքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ հատուկ մանկավարժի, հոգեբանի և ուսուցչի օգնականների մասնակցությամբ՝ անհրաժեշտ է կազմակերպել ամենօրյա աշխատանքային քննարկումներ՝ նպատակ ունենալով շարունակաբար վերլուծել ուսումնական գործընթացը, բացահայտել առաջացած խնդիրներն ու համատեղ գտնել դրանց արդյունավետ լուծումները: Նա կարևորեց թիմային համագործակցությունը և ընդգծեց, որ յուրաքանչյուր երեխայի կարիքներին համապատասխան անհատական աշխատանքի կազմակերպումը առաջնահերթ նշանակություն ունի:

Զեկուցողը ներկայացրեց նաև նախորդ ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների համար կազմված ԱՈՒՊ-ների, ինչպես նաև դիտարկման թերթիկների լրացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ շեշտելով, որ այդ աշխատանքները իրականացվում են գործող կարգավորումներին և սահմանված պահանջներին լիովին համապատասխան:

Բացի այդ, նշվեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները: Ըստ սահմանված կարգի՝ երկու ամիսը մեկ անգամ կազմակերպվում են համատեղ քննարկումներ՝ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ, որոնց ակտիվորեն ներգրավված է նաև դպրոցի տնօրինությունը: Այս հանդիպումները միտված են ուսումնական և զարգացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և աշակերտների կրթական կարիքների առավել ամբողջական ապահովմանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը իր խոսքում շեշտեց, որ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է անպայման հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները, քանի որ դիտարկվող վարքային փոփոխությունների զգալի մասը պայմանավորված է հենց տարիքային զարգացման փուլերով և անցումներով: Նա կարևորեց աշխատանքի ճիշտ ու համակարգված կազմակերպումը, ինչպես նաև ծնողի, ուսուցչի և աջակցության թիմի միջև արդյունավետ ու շարունակական համագործակցությունը՝ որպես հաջող աշխատանքի առանցքային պայման:

Միաժամանակ, արտահայտվողները կարևորեցին ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների հետևողական, նպատակային և լիարժեք իրականացումը՝

ընդգծելով, որ այն նպաստում է յուրաքանչյուր սովորողի անհատական առաջընթացի ապահովմանը, կարիքների ճիշտ բացահայտմանը և աջակցման գործընթացի արդյունավետ ուղղորդմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նոյեմբեր ամսվա աշխատանքներ։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքի տարեկան պլանի շրջանակում նոյեմբեր ամսվա ընթացքում նախատեսված և արդեն իսկ իրականացված միջոցառումները։ Նա ընդգծեց, որ ինչպես նոյեմբերին, այնպես էլ նախորդ ամիսների ընթացքում բոլոր ծրագրավորված նախաձեռնություններն իրականացվել են հաստատված ժամանակացույցին համապատասխան՝ պահպանելով սահմանված կարգն ու գործող պահանջները։

Նշվեց, որ իրականացված աշխատանքները կրել են համակարգված, նպատակային և համագործակցային բնույթ՝ նպաստելով ուսումնական տարվա արդյունավետ մեկնարկին և կրթական գործընթացի բնականոն կազմակերպմանը։ Միաժամանակ քննարկումների ընթացքում վեր հանվեցին առանձին գործողությունների արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիներ՝ հետագա աշխատանքների բարելավման նպատակով։

Քննարկումների արդյունքում ընդունվեց որոշում տնօրենության գրավոր աշխատանքները տեղափոխել ուսումնական տարվա երկրորդ կիսամյակ։ Որոշման հիմքում դրվեց այն հանգամանքը, որ դասապրոցեսը ներկայումս կազմակերպվում է երկու հերթով, ինչի հետևանքով դեռևս չեն ապահովվում անհրաժեշտ և բավարար պայմաններ նման աշխատանքների պատշաճ և լիարժեք իրականացման համար։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր գործառույթներն ու միջոցառումները, որոնք վերաբերում էին մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են լիարժեք և պատշաճ կերպով։ Նրանք ընդգծեցին, որ աշխատանքների իրականացման ընթացքում որևէ բացթողում կամ թերակատարում չի արձանագրվել, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր մակարդակի պատասխանատվություն, նախաձեռնողականություն և արդյունավետ համագործակցային մոտեցում՝ ապահովելով ծրագրով սահմանված նպատակների և խնդիրների ամբողջական իրագործումը։

Միաժամանակ նշվեց, որ աշխատանքը կազմակերպվել և իրականացվել է կանխատեսելի, հստակ պլանավորված և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչը նպաստել է միջոցառումների որակյալ անցկացմանը և սպասվող արդյունքների ապահովմանը։ Արտահայտվողների կարծիքով՝ նման համակարգված և կառուցողական մոտեցումը նպատակահարմար է շարունակել նաև հետագա ամիսներին՝ պահպանելով ձեռք բերված դրական դինամիկան, բարձր աշխատանքային կարգապահությունը և ձևավորված մասնագիտական մշակույթը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«24» դեկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները:

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Սիմոնյան Աննա
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տարրական կրթության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. Տարրական կրթության մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
9. 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դոկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
11. Մանկավարժական զեկուցում՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում» թեմայով:

(զեկուցող՝ Ն. Գալստյան)

12. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորում, տարակարգ, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներ:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

13. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվություններ:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

14. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Տարրական կրթության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում գրավոր աշխատանքները տրվել են հաստատված քանակին և տեսակին համապատասխան: Հավելեց, որ տրված գրավոր աշխատանքները, ամփոփումները պետք է համապատասխանեն ուսուցիչների կողմից կատարված գրանցումներին և տրված թեմատիկ, գործնական աշխատանքների քանակին, ինչպես նաև կարևորվեց ՕԹՊ-ների կատարողականը: Զեկուցողը նշեց, որ 1-4-րդ դասարաններում յուրաքանչյուր թեմայի համար իրականացվում է ամփոփում, իսկ ամփոփումների տեսակները սահմանված են ՕԹՊ-երում: Հավելեց, որ բոլոր տրված աշխատանքները համապատասխանում են ՕԹՊ-ով սահմանված պահանջներին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ամփոփիչ գրավոր աշխատանքներ հանձնարարելիս անհրաժեշտ է խստորեն առաջնորդվել չափորոշչային պահանջներով՝ կարևորելով, որ դրանք լիովին համապատասխանեն ՕԹՊ-ներին: Նա ընդգծեց, որ մեթոդական միավորումներում են հաստատվում ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքների տեսակներն ու քանակները, որոնց համապատասխան էլ ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները պարտավոր են իրականացնել այդ աշխատանքները:

Սերգեյ Ավանեսյանը անհրաժեշտ համարեց մեկ անգամ ևս ուշադրություն դարձնել ամփոփիչ աշխատանքների համապատասխանությանը ՕԹՊ-ներին՝

շեշտելով, որ դա կարևոր նախապայման է էլեկտրոնային մատյաններում գնահատումների և գրանցումների ճիշտ ու ճշգրիտ իրականացման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել ստուգումներ ամփոփումների, ամփոփիչ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված։

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում տարրական դասարաններում իրականացված դասալսումների ընթացքի, նպատակների, դիտարկումների և արձանագրված արդյունքների վերաբերյալ համապարփակ ու համակարգված տեղեկատվություն։ Մասնավորապես ներկայացվեցին դասալսումների ընթացքում արձանագրված դրական փորձը, ուսուցման արդյունավետ և ժամանակակից մեթոդների կիրառման օրինակները, ինչպես նաև ուսումնառության կազմակերպման ընթացքում ի հայտ եկած դժվարությունները և բարելավման ենթակա ոլորտները։

Զեկուցողը նշեց, որ նպատակահարմար է առավել հաճախ կազմակերպել փոխադարձ դասալսումներ, իրականացնել մասնագիտական քննարկումներ և խորքային դիտարկումներ՝ առկա խնդիրները բացահայտելու և դրանց շտկման համար համապատասխան քայլեր ձեռնարկելու ուղղությամբ։ Այս գործընթացը, նրա խոսքով, կնպաստի ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը, փորձի փոխանակմանը և ուսուցման որակի շարունակական բարձրացմանը։ Նա նաև ներկայացրեց առաջին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփ վերլուծությունը։

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև բաց դասերին և դաս-միջոցառումներին ուսուցիչների մասնակցության մակարդակին, ինչպես նաև դրանց արդյունքների պարտադիր քննարկման ու վերլուծության կարևորությանը՝ հետագա աշխատանքների արդյունավետության բարձրացման և կրթական գործընթացի կատարելագործման նպատակով։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողներն իրենց դիտարկումներում ընդգծեցին դասերի կազմակերպման բարձր մակարդակը, դասավանդման կիրառվող մեթոդների բազմազանությունն ու արդիականությունը, ինչպես նաև սովորողների ակտիվ և գիտակցված ներգրավվածության աստիճանը։ Նրանք ներկայացրին նաև մի շարք կառուցողական առաջարկություններ՝ ուղղված ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը և մեթոդական աշխատանքների արդյունավետության շարունակական բարելավմանը։ Առանձնակի կարևոր համարվեց դասապրոցեսի ընթացքում ճիշտ մեթոդների և հնարների նպատակային, տեղին ու հավասարակշռված կիրառումը, որոնք միտված են բոլոր աշակերտների ընդգրկմանը և ուսումնառության արդյունավետության ապահովմանը։

Բացի այդ, արտահայտվողները շեշտեցին դասալսումների ընթացքում համագործակցային մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը՝ կարևորելով փոխադարձ աջակցությունը, փորձի փոխանակումն ու համատեղ վերլուծությունը։ Արդյունքների ամփոփման ընթացքում առանձնակի ուշադրություն դարձվեց ուսուցիչների ցուցաբերած մասնագիտական մոտեցումներին, ներկայացված առաջարկություններին, ինչպես նաև ի հայտ եկած խնդիրների քննարկման կառուցողական և նպատակային եղանակներին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, կազմակերպվել է երկարօրյա ուսուցման խմբակ 3-4-րդ և 5-7-րդ դասարանների աշակերտների համար: Աշակերտների ընդգրկումը երկարօրյա խմբերում իրականացվել է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.
2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա, ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ սահմանված կարգով երկարօրյա խմբերում ընդգրկված աշակերտների մոտ արձանագրվել է նկատելի և կայուն առաջընթաց, իսկ ուսուցիչները հետևողական և արդյունավետ կերպով իրականացրել են նրանց համար նախատեսված նպատակներն ու

առաջադրանքները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի կարողություններն ու կարիքները։
Երկարօրյա խմբերի ղեկավարները ներկայացրին իրենց գործունեության հաշվետվությունները՝ մանրամասն անդրադառնալով իրականացված աշխատանքներին, գրանցված ձեռքբերումներին, կիրառված մոտեցումներին և ուսումնական գործընթացում արձանագրված արդյունքներին՝ կարևորելով աշխատանքի շարունակական բարելավման անհրաժեշտությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա խմբերի մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները։

Լսեցին 6. Տարրական կրթության մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ 2-րդ կիսամյակում Տարրական կրթության մեթոդմիավորումում ժամաբաժանման փոփոխություն նախատեսված չէ և 2-րդ կիսամյակի ընթացքում ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ժամաքանակները մնում են անփոփոխ։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխումը կատարելիս, ինչպես նաև 2025–2026 ուսումնական տարվա մեկնարկին, քննարկվել է ժամաբաժանման հարցը՝ հաշվի առնելով 1–4-րդ դասարաններում առարկայացանկի հնարավոր փոփոխությունները և նոր ՀՊՉ պահանջները, որոնց համապատասխան կազմվել է 2025–2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը և հաստատվել ժամաբաժանման համար։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է)։

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային մատենավարության վարման վիճակի ստուգման արդյունքները, մանրամասն անդրադառնալով մատյանում արձանագրված թերություններին և բացթողումներին։ Նա ընդգծեց, որ անհրաժեշտ է խստորեն հետևել գնահատման համակարգում կատարվող փոփոխություններին, գնահատականները մուտքագրել սահմանված ժամկետներում և առաջնորդվել միայն ամփոփիչ աշխատանքների արդյունքներով՝ ապահովելով տվյալների ճշգրտությունն ու գնահատման գործընթացի ամբողջականությունը։

Առստամյանն առաջարկեց պարբերաբար բանավոր կերպով նախազգուշացնել մեթոդմիավորման անդամներին մատենավարության ընթացքում նկատված բացթողումների մասին, ինչը կնպաստի գրանցումների ճշգրտության բարձրացմանը, տեղեկատվության թափանցիկության պահպանմանը և գնահատման գործընթացի միատեսակ, կարգապահ ու համակարգված իրականացմանը։

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Ս. Ավանեսյանը։

Արտահայտվողները ընդգծեցին, որ անհրաժեշտ է խստորեն վերահսկել ուսուցիչների ամենօրյա աշխատանքը, որը կապված է էլեկտրոնային մատենավարության վարման հետ։ Նրանք հորդորեցին լինել առավել ուշադիր, չշեղվել ՕԹՊ-երից, աշխատանքն ավարտելուց հետո կրկին ստուգել մատյանը և խնդիրների դեպքում անմիջապես համագործակցել մեթոդական միավորման նախագահի, տնօրենության տեղակալի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ԷԿԴԱՄ-ների հետ։

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց գնահատականների ժամանակին մուտքագրման, թեմաների օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխանեցման և գրանցումների ճիշտ ու ամբողջական կատարման անհրաժեշտությունը՝ որպես գնահատման ճշգրտությունն ու տվյալների ամբողջականությունը ապահովելու կարևոր նախապայման:

Արտահայտվողները նաև ընդգծեցին հետևողականության և ուշադրության պահպանման անհրաժեշտությունը՝ հիշեցնելով, որ ուսուցիչները պետք է վերահսկեն իրենց ամենօրյա աշխատանքները, լինեն խստապահանջ, և ցանկացած խնդիրների դեպքում անմիջապես դիմեն մ/մ նախագահին, ուսումնական մասի ղեկավարին կամ էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետներին, որպեսզի մատյանն իրականացվի պատշաճ և համակարգված ձևով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման ամփոփման մասին ինֆորմացիան, առաջարկել ուսուցիչներին ապահովել էլեկտրոնային մատենավարության վարման կարգի խիստ պահպանումը:

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն՝ շեշտելով, որ բոլոր աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին լիարժեք համապատասխանությամբ: Նա հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող գործունեության ընթացքում ապահովվում է ակտիվ համագործակցություն ԳՏՄԱԿ-ի մասնագետների հետ, ինչը նպաստում է գործընթացի համակարգվածության և արդյունավետության բարձրացմանը:

Զեկուցողն ընդգծեց, որ ըստ գործող կարգի՝ երկու ամիսը մեկ անգամ կազմակերպվում են քննարկումներ, որոնց մասնակցում են ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչները, ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժը և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողները: Այս հանդիպումներին մասնակցում է նաև դպրոցի տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը: Քննարկումների ընթացքում մանրամասն դիտարկվում են փաստաթղթերը, գնահատվում իրականացված աշխատանքների արդյունավետությունը, իսկ առանձնակի ուշադրություն է դարձվում աշակերտների ձեռքբերումներին, առաջընթացին և անհատական կարիքների ճիշտ գնահատմանը՝ նպաստելով ուսուցման և աջակցման գործընթացների շարունակական բարելավմանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց աշխատանքների համակարգված և նպատակային կազմակերպման կարևորությունը, ինչպես նաև ծնող-ուսուցիչ-աջակցության թիմի արդյունավետ համագործակցությունը՝ նշելով, որ ԱՈՒՊ-ի շրջանակներում սահմանված նպատակների հետևողական իրագործումը և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը առաջնահերթ նշանակություն ունի ուսուցման բարձր որակի ապահովման և աշակերտների համալիր զարգացման գործընթացի արդյունավետության համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 9. 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում իր, տնօրենի տեղակալի, մեթոդմիավորման նախագահի, դասարանների դասվարների և մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացված դասալսումների և դասերի դիտարկումների արդյունքները: Նշվեց, որ 1–4-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները էլեկտրոնային տարբերակով, իսկ մատենավարությունը կազմակերպված էր ըստ օրացուցային-թեմատիկ պլանների պահանջների:

Զեկուցողը նշեց, որ օրվա դասի պլանների մեջ հստակ նշված են տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը, ՀՊՉ համապատասխան կոդերը, խաչվող հասկացությունները, կարողունակություններն ու խնդիրները: Դասապրոցեսի քայլերը սահմանված են այն քայլերով, որոնց միջոցով իրականացվում է ուսուցումը, իսկ ռեսուրսներն ու մեթոդները հստակ ընդգծված են: Միևնույն ժամանակ արձանագրվեցին որոշ խնդիրներ՝ կապված կարողությունների զարգացման հետ, հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը բարձր է և անհնար է բոլոր աշակերտների մոտ հավասարաչափ ապահովել կարողությունների զարգացումը:

Բացի այդ, ուսուցիչները դժվարանում են մեծ թվով աշակերտների պարագայում բոլորին հավասարապես ներգրավել դասապրոցեսին և հետևել նրանց ինքնուրույն աշխատանքի իրականացմանը: Սակայն, քանի որ օրվա դասի պլաններում հստակ սահմանված է թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել դասի ավարտին անհրաժեշտ արդյունքները, ինչը հատկապես արդյունավետ է փոքր խտությամբ դասարաններում:

Զեկուցողն ուշադրություն դարձրեց նաև գնահատման գործընթացին՝ նշելով, որ հիմնական բացթողումները կապված են գնահատման գործիքակազմի կիրառման հետ, մինչդեռ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին և կատարում սահմանված պահանջները:

Վերջում զեկուցողն առաջարկեց շարունակել ուշադրության կենտրոնում պահել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացումը, թեմայի վերջնարդյունքների իրագործումը, աշակերտների ներգրավվածության բարձրացումը դասապրոցեսում, ինչպես նաև գնահատման նոր համակարգի արդյունավետ կիրառումը՝ նպատակ ունենալով ուսուցման որակի շարունակական բարձրացում և արդյունքների համահունչ իրականացում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասալսումների արդյունքում պարզ է դարձել՝ ուսուցիչները հիմնականում բավարարում են նոր ՀՊՉ-ների պահանջները, իսկ օրացուցային-թեմատիկ պլանների և մատենավարության ճիշտ կազմակերպումը կարևոր դեր է խաղում դասի արդյունավետության ապահովման գործում: Նրանց դիտարկմամբ՝ մեծ խտությամբ դասարաններում առկա են դժվարություններ աշակերտների հավասար ներգրավվածությունն ու կարողությունների զարգացումը ապահովելու հարցում, ինչի արդյունքում անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ մեթոդներ և մոտեցումներ՝ յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը առավել արդյունավետ դարձնելու համար:

Արտահայտվողները կարևորեցին նաև գնահատման նոր համակարգին տիրապետելու անհրաժեշտությունը և ընդգծեցին, որ շարունակական ուշադրությունը պետք է պահվի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, թեմայի վերջնարդյունքների ապահովման և ուսուցման արդյունավետության բարձրացման վրա, ինչը կմնա առաջնահերթություն և կխթանի ուսուցողական գործընթացի որակի շարունակական բարելավումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան:

Լսեցին 10. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում դեկտեմբեր ամսվա ընթացքում և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների համապարփակ տեղեկատվությունը: Նշվեց, որ Տարրական կրթության մեթոդմիավորման կողմից պլանավորված բոլոր ուսումնադաստիարակչական միջոցառումները այդ ժամանակահատվածում իրականացվել են հիմնականում ամբողջական, նպատակային և սահմանված ժամկետներում:

Մասնավորապես իրականացվել են հայրենասիրական, իրավական, մշակութային, ճանաչողական, լեզվամտածողական և քաղաքացիական դիրքորոշում ձևավորող, ինչպես նաև արժեքային դաստիարակությանը միտված բաց դասեր, դաս-միջոցառումներ, քննարկումներ, այցելություններ, գործնական աշխատանքներ, դասալսումներ, աշխատանքային տետրերի և դասագրքերի ստուգումներ՝ համապատասխանելով գործող կրթական չափորոշիչների պահանջներին:

Ներկայացվեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված աշխատանքներն իրականացվել են պատշաճ և ամբողջական ձևով, իսկ կատարված աշխատանքների վերաբերյալ նյութերը հրապարակվել են դպրոցի պաշտոնական կայքում՝ ապահովելով իրականացված գործունեության թափանցիկությունն ու հանրայնացումը:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ուսումնական գործընթացում ժամանակակից մեթոդների և նոր մոտեցումների կիրառմանը, ինչպես նաև աշակերտների ուսումնառության որակի բարձրացմանն ուղղված իրականացված աշխատանքներին: Միաժամանակ առանձնացվեցին առանձին գործողությունների արդյունավետությունը բարելավելու հնարավոր ուղիները և հետագա զարգացման ուղղությունները, ինչը կնպաստի ուսուցման գործընթացի շարունակական կատարելագործմանը և կրթական գործունեության որակի բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները շեշտեցին, որ իրականացված միջոցառումներն էականորեն նպաստել են սովորողների ակտիվության, խոսքային և վերլուծական հմտությունների զարգացմանը: Քննարկման ընթացքում ուշադրություն դարձվեց կատարված աշխատանքների արդյունավետությանը, առկա դժվարություններին և դրանց հաղթահարման հնարավոր ուղիներին երկրորդ կիսամյակում:

Ընդգծվեց, որ իրականացվող աշխատանքների ընթացքում բացթողումներ կամ թերակատարումներ չեն արձանագրվել, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և արդյունավետ համագործակցային մոտեցում՝ ապահովելով ծրագրի նպատակների ամբողջական իրագործումը: Միաժամանակ նշվեց, որ ուսումնադաստիարակչական գործունեությունը կազմակերպվել և իրականացվել է կանխատեսելի, համակարգված և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչը նպաստել է միջոցառումների որակյալ անցկացմանը և նախատեսված արդյունքների ապահովմանը:

Արտահայտվողների կարծիքով՝ նման համակարգված և հետևողական մոտեցումը նպատակահարմար է շարունակել նաև հետագա ամիսներին՝ պահպանելով ձեռք բերված դրական դինամիկան, ձևավորված մասնագիտական և աշխատանքային մշակույթը: Կարևորվեց նաև առաջին կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումների համապատասխանությունը տարեկան պլանին և դրանց ընդհանուր

արդյունավետությունը, ինչը վկայում է ուսուցողական գործընթացի պլանավորված և հաջողված կազմակերպման մասին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 11. Մանկավարժական զեկուցում՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում» թեմայով։

(զեկուցող՝ Ն. Գալստյան)

Զեկուցողը հանգամանալից ներկայացրեց թեման, կարևորեց այն փաստը, որ կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման հարցում և արտացոլում է աշխարհի այն տեսակը, որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար։ Արդի ժամանակաշրջանում և ժամանակակից աշխարհում կրթության հենքն և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեքային համակարգի ձևավորումը։

Արժեքների ձևավորման, արժեքային համակարգի հստակեցման ամբողջ գործընթացը դիտվում է անձի կայացման և սոցիալականացման գործընթացի հետ միասին, կազմում նրա անբաժանելի մասն և պայմանավորում անձի (աշակերտի) վարքը։ Արժեքային համակարգի ձևավորումը միանգամից տեղի ունենալ չի կարող, այն աշակերտի մեջ սերմանվում է քայլ առ քայլ, կաթիլ առ կաթիլ և ցանկալի արդյունքը շատ հաճախ տեսնում ենք տարիներ անց՝ երբեմն դպրոցն ավարտելուց հետո։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ թեման իսկապես կարևոր է, այն ապացուցում է, որ արժեքային համակարգը թույլ է տալիս անձին գնահատել շրջակա աշխարհը, արժեքների միջոցով իրականության առարկաներն ու երևույթները բնութագրվում են հասարակական նշանակություններով։ Արժեքային համակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները։ Մասնավորապես անգնահատելի է Հայոց լեզվի և գրականության դերը։ Իսկ տարրական դասարաններում շեշտը իհարկե դրվում է «Մայրենի» առարկայի դասավանդման հիմքում։ Տարրական դպրոցում «Մայրենի»-ի դասվանդման, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման, մեթոդների ընտրության, նպատակային և հետևողական կիրառման համատեքստում ամրապնդվում է աշակերտների բարոյական, հոգևոր, գեղագիտական, իմացական, մշակութային և ազգային արժեքների ձևավորումը։ Գաղտնիք չէ, որ ուսուցիչը դասապրոցեսում լուծում է թե՛ ուսումնական, թե՛ դաստիարակչական խնդիրներ։ Յուրաքանչյուր դասընթացում ուշադրություն պետք է դարձնել, որ դաստիարակչական և ուսումնական խնդիրները մեկտեղվեն, համընթաց զարգանան։ Այսինքն, շատ կարևոր է, որ ուսուցչի աչքը լինի ամենատես, հոգին լինի ամենազգաց, իսկ միտքը լինի ամենաընթաց։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 12. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների հերթական վերապատրաստման գործընթացին ակտիվ մասնակցությունը, ընդգծելով, որ ինչպես 2024–2025, այնպես էլ 2025–2026 ուսումնական տարում կատարվել է ուսուցիչների կարիքի գնահատում, որի արդյունքում 2024–2025 ուսումնական տարում հերթական

ատեստավորման է մասնակցել 15 ուսուցիչ, ովքեր հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը և 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում մասնակցել 2-րդ շրջափուլին: 2025–2026 ուսումնական տարում հերթական ատեստավորմանը մասնակցել է 11 ուսուցիչ, որոնք նույնպես հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը:

Զեկուցողը նաև նշեց, որ 2025 թվականին դպրոցի մանկավարժական անձնակազմը ակտիվ մասնակցություն է ունեցել ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող դասընթացներին՝ ընդհանուր առմամբ իրականացվել է 12 դասընթաց, որոնց մասնակցել է 33 մանկավարժ: Նա անդրադարձավ նաև «Էսսեագրություն» թեմայով վերապատրաստման դասընթացին, որի նպատակն էր մեթոդմիավորման ուսուցիչներին նախապատրաստել 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից միասնական ավարտական քննությանը:

Կամավոր ատեստավորման արդյունքների վերաբերյալ զեկուցողը նշեց, որ 2025 թվականին դպրոցի ուսուցիչները արձանագրել են բարձր արդյունքներ: Առաջին անգամ մասնակցած Կարինե Մալխասյանը, Տաթևիկ Փարսադանյանը, Ռիտա Շալունցը, Կարինե Արզումանյանը, Ռուզաննա Խաչատրյանը և Հայկ Օհանյանը ցուցաբերել են բարձր արդյունքներ, ինչը հաստատեց դպրոցի ուսուցչական կազմի բարձր մասնագիտական ներուժը:

Զեկուցողը ներկայացրեց նաև 2023–2025 թվականներին կամավոր ատեստավորմանը մասնակցած դպրոցի 18 ուսուցիչներին՝ մանրամասն ընդգծելով նրանց մասնագիտական ուղղվածությունը. Մալխասյան Կարինե – դասվար, Փարսադանյան Տաթևիկ – դասվար, Շալունց Ռիտա – դասվար, Արզումանյան Կարինե – «Տեխնոլոգիա», Խաչատրյան Ռուզաննա – «Հասարակագիտություն», Օհանյան Հայկ – «Ֆիզիկա», Ղուլյան Օլյա – «ԹԳՀԳ», Գրիգորյան Թագուհի – «Անգլերեն», Հայրապետյան Մարիամ – «Ռուսաց լեզու», Գյուրջյան Շահանե – «Ռուսաց լեզու», Առստամյան Ալլա – «Մաթեմատիկա», Սարգսյան Լիլիթ – «Հայոց լեզու», Սարգիսջանյան Անուշ – «Հայոց լեզու», Պողոսյան Կարինե – դասվար, Ջավահիրյան Իրինա – դասվար, Պետրոսյան Մարգարիտա – «Ռուսաց լեզու», Հարությունյան Սոնա – «Հայոց լեզու», Աբգարյան Աննա – «Ֆիզկուլտուրա»:

Նշվեց, որ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչները 2023-2025 թվականներին ցուցաբերել են բարձր ակտիվություն և բարձր արդյունքներ կամավոր ատեստավորման գործընթացում: Ընդհանուր առմամբ, դպրոցի ուսուցչական անձնակազմի 41 տոկոսը մասնակցել է կամավոր ատեստավորմանը, ստանալով բարձր գնահատականներ: Արդյունքների հիման վրա ուսուցիչների համար սահմանվել է 200 000 դրամ դրույքաչափ, ինչպես նաև 30–50 տոկոս հավելավճար:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ուսուցիչների տարակարգի շնորհմանը՝ նշելով, որ 2025 թվականի ընթացքում դպրոցի մանկավարժներից 3-րդ աստիճանի տարակարգ են ստացել «ԹԳՀԳ» առարկայի ուսուցչուհի Օլյա Ղուլյանը և «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչուհի Ալլա Զեյնալյանը, իսկ ավելի վաղ 1-ին աստիճանի տարակարգ էր ստացել «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Սոնա Հարությունյանը:

Զեկուցողն ընդգծեց, որ ուսուցիչների կամավոր ատեստավորումը ծառայում է նրանց մասնագիտական գիտելիքների բացահայտմանը, մինչդեռ տարակարգը չափանիշ է, որը ցույց է տալիս այդ գիտելիքների կիրառումը դասարանում՝ նկատի ունենալով մանկավարժական մոտեցումների և համապատասխան հմտությունների առկայությունը:

Զեկուցողն ընդգծեց, որ 2025 թվականի կամավոր ատեստավորմանը մասնակցել են նաև «Պատմություն» առարկայի ուսուցչուհի Մերի Դանիելյանն ու դասվար Արուս Դոլունցը, որոնք չեն հաղթահարել 60 տոկոսի շեմը, ուստի 2026 թվականին նրանց համար նախատեսվում է իրականացնել կարիքի

գնահատում, որից հետո նրանք պետք է մասնակցեն հերթական ատեստավորմանը՝ 1-ին մակարդակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները ընդգծեցին, որ արդի մեթոդների և դասավանդման հնարների իմտությունը հատկապես կարևոր է դասապրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նրանք շեշտեցին պարտադիր վերապատրաստման գործընթացի անհրաժեշտությունը, քանի որ այն տալիս է հնարավորություն ծանոթանալու նորամուծություններին, հետևելու կատարվող փոփոխություններին և ապահովելու փորձի արդյունավետ փոխանակումը ուսուցիչների միջև:

Կարևորվեց նաև ուսուցիչների ակտիվ մասնակցությունը կամավոր ատեստավորման գործընթացին, որը, ըստ արտահայտվողների, առաջնահերթ նպաստում է ուսուցչի մասնագիտական կարողությունների զարգացմանը, ինքնակրթության առաջխաղացմանը և դասավանդման որակի բարելավմանը՝ նպաստելով ընդհանուր կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին զեկուցումը (կցվում է):

Լսեցին 13. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի №216-Ն որոշման համաձայն՝ դպրոցի բոլոր խմբավարները ներկայացրել են ամսական և կիսամյակային հաշվետվություններ, որոնցում մանրամասն անդրադարձ է կատարվել 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքներին:

Ընդհանուր առմամբ՝ յուրաքանչյուր խմբավար ներկայացրել է 4 ամսական հաշվետվություն սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների համար, ինչպես նաև 1 կիսամյակային հաշվետվություն, որտեղ ամփոփված են եղել նշված չորս ամիսների ընթացքում իրականացված աշխատանքները՝ ընդգծելով ձեռքբերումներն ու առկա առաջընթացը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներո ընդգծեցին, որ խմբավարների հաշվետվությունները շատ կարևոր են ուսումնական գործընթացի արդյունավետությունը գնահատելու և հետագա պլանավորումները առավել նպատակային, համակարգված և նպատակային կազմակերպելու համար: Նրանք շեշտեցին աշխատողի աշխատանքի ընթացքի շարունակական մոնիտորինգի անհրաժեշտությունը և ընդգծեցին, որ հաշվետվությունների միջոցով ոչ միայն արձանագրվում են ձեռքբերումներն ու հաջողությունները, այլև հայտնվում են բարելավման հնարավոր ուղղությունները, ինչը նպաստում է աշխատանքային գործընթացի շարունակական կատարելագործմանը և կրթական գործունեության որակի բարձրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները:

Լսեցին 14. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից դպրոցում նախատեսվում է ձևավորել երեխաների պաշտպանության խումբ, որի կազմում ընդգրկվելու են դպրոցի տնօրինության և մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչներ, ներառական կրթության բաժնի

աշխատակիցներ, ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներ, ծնողներ և շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչներ: Խմբի հիմնական նպատակն է ապահովել երեխաների իրավունքների պաշտպանությունը, ստեղծել անվտանգ և աջակցող ուսումնական միջավայր, արձագանքել ցանկացած ռիսկային կամ խնդիր ստեղծող իրավիճակի և կանխարգելիչ աշխատանքներ իրականացնել՝ միաժամանակ բարձրացնելով ուսուցիչների և ծնողների գիտակցությունը երեխաների իրավունքների մասին:

Զեկուցողը շեշտեց, որ խմբի գործունեությունը հիմնված է երեխաների պաշտպանությունը առաջնահերթություն դարձնելու վրա՝ ապահովելով նրանց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգությունը: Նույն մոտեցումը ներկայում պիլոտային սկզբունքով իրականացվում է հանրապետության մի շարք այլ դպրոցներում, որտեղ փորձարկվում են երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված նոր մեթոդներ և ստուգվում է դրանց արդյունավետությունը: Պիլոտային փորձարկումները հաջողությամբ ավարտելուց հետո նախատեսվում է այս սկզբունքը ընդլայնել և ներդնել հանրապետության բոլոր դպրոցներում, ինչի նպատակն է ստեղծել անվտանգ, ներառական և պաշտպանված կրթական միջավայր՝ բոլոր աշակերտների համար:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ երեխաների պաշտպանության խմբի ստեղծումը կարևոր քայլ է՝ երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու և անվտանգ, աջակցող ուսումնական միջավայր ձևավորելու ուղղությամբ: Նրանք ընդգծեցին, որ նման նախաձեռնությունը կնպաստի ոչ միայն երեխաների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգությանը, այլև կնպաստի ուսուցիչների, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ամրապնդմանը:

Բացի այդ, ընդգծվեց, որ պաշտպանության խմբի գործունեությունը կխթանի կրթական գործընթացում ներառականության սկզբունքի ընդլայնումը, աշակերտների անհատական կարիքների նկատմամբ ուշադրության բարձրացումը և աջակցող մոտեցումների համակարգված կիրառումը, ինչը երկարաժամկետ հեռանկարում կնպաստի ուսումնական միջավայրի որակի բարձրացմանը և երեխաների համապարփակ զարգացման ապահովմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին զեկուցումը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«29» հունվարի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները:

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Սիմոնյան Աննա (փոխարինում է Աղաբեկյան Անուշին)
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2-րդ դասարաններում ամփոփիչ գրավոր աշխատանքների հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. ԱՈՒՊ-ներ, դիտարկման թերթիկներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2-4-րդ դասարաններում «Մայրենի» առարկաների դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. 3-4-րդ դասարաններում տետրերի ստուգման մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
10. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
11. 3-4-րդ դասարաններում «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստում և գրավորների հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա «Տարրական կրթության մեթոդմիավորման» 6-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նիստի արդյունքները և անդրադարձավ կատարված աշխատանքներին: Նշվեց, որ նախատեսված աշխատանքներն ու ընդունված որոշումները իրականացվել են պատշաճ և սահմանված ժամկետներում՝ ապահովելով մեթոդմիավորման աշխատանքների համակարգված ընթացքը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները կարևորեցին կատարված աշխատանքների ժամանակին և որակյալ իրականացումը՝ ընդգծելով, որ դա վկայում է մեթոդմիավորման արդյունավետ կազմակերպման մասին: Նրանք նաև առաջարկեցին պահպանել նույն հետևողական և պատասխանատու մոտեցումը՝ հետագա աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման նպատակով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց նոր չափորոշիչների ներդրման ընթացքում նախորդող ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրները, նշեց, որ որոշման համաձայն վերահսկողության արդյունքները պետք է քննարկվեն հաճախակի, միևնույն ժամանակ հավելեց. քանի որ ընթացքում ուսուցիչների մոտ հարցեր են առաջանում, ապա անհրաժեշտ է համարում այս նիստի ընթացքում նույնպես քննարկել նոր ՀՊՉ-ների ներդրման հետ կապված հարցերը և ընդունել որոշումներ՝ հետագա աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար: Զեկուցողը նաև կարևորեց 1-4-րդ դասարաններում կատարված դասալսումների և քննարկումների արդյունքում բարձրաձայնվող հարցերի շուրջ տրվող պարզաբանումները: Զեկուցողն առաջարկեց կիրառել բոլոր դասարաններում նախորդ տարի ներդրված ՀՊՉ-ների ներդրման գործընթացը, քանի որ շատ հարցերում նախորդ տարվա փորձի կիրառումը արդյունավետ է և օգտակար:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը

Ռիտա Շալունցը նշեց, որ նոր չափորոշչային դասարաններում խնդիրներ հիմնականում լինում են գնահատման նոր սկզբունքների հետ կապված, սակայն դրանք ի տարբերություն նախորդ ուսումնական տարվա շատ քիչ են և էական ազդեցություն չեն թողնում ընդհանուր պատկերի վրա: Գնահատման նոր սկզբունքների շուրջ տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանի կողմից իրականացված քննարկումների, պարզաբանումների արդյունքում շտկվել են բոլոր այն բացթողումները, որոնք արձանագրվել էին նախորդ ուսումնական տարվա ընթացքում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 1-4-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների կողմից մատենավարության ոլորտում կատարված աշխատանքները՝ ընդգծելով դրանց նշանակությունը ուսումնական

գործընթացի պատշաճ կազմակերպման գործում: Նա նշեց, որ հետևողական վերահսկողության արդյունքում «Տարրական կրթության մեթոդմիավորման» ուսուցիչների շրջանում թերությունները կտրուկ նվազել են, ինչը վկայում է աշխատանքների համակարգված և պատասխանատու իրականացման մասին:

Արտահայտվեցին՝ Ն. Գալստյանը, Ա. Աղաբեկյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հետևողական աշխատանքը նպաստում է ուսուցիչների կարողությունների զարգացմանը՝ հատկապես էլեկտրոնային մատենավարության արդյունավետ իրականացման գործում:

Անահիտ Աղաբեկյանը կարևորեց ամենօրյա գրանցումների կատարումը՝ ընդգծելով, որ այդ մոտեցումը զգալիորեն նվազեցնում է անճշտությունների առաջացման հավանականությունը և ապահովում է տվյալների ճշգրտությունը:

Արտահայտվողները բարձր գնահատեցին արձանագրված դրական արդյունքները՝ նշելով, որ մատենավարության բարելավումը նպաստում է ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպվածությանը, այնպես էլ հաշվետվողականության բարձրացմանը: Նրանք առաջարկեցին շարունակել հետևողական վերահսկողությունը և պահպանել ձեռք բերված արդյունքները՝ հետագայում ևս բացառելով հնարավոր թերությունները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը, շարունակել վերահսկողությունը:

Լսեցին 5. 2-րդ դասարաններում ամփոփիչ գրավոր աշխատանքների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի համար 2-րդ դասարանների դասվարների կողմից առաջարկված «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների ամփոփիչ գրավոր աշխատանքները: Նա անդրադարձավ դրանց բովանդակությանը, կառուցվածքին և համապատասխանությանը ուսումնական ծրագրերի ու չափորոշչային պահանջներին՝ ընդգծելով, որ առաջադրանքները նպատակաուղղված են սովորողների գիտելիքների և հմտությունների համակողմանի գնահատմանը:

Արտահայտվեցին՝ Ի. Ջավահիրյանը, Ա. Աղաբեկյանը, Տ. Փարսադանյանը

Արտահայտվողները կարևորեցին ներկայացված աշխատանքների նպատակային ընտրությունն ու կառուցվածքը՝ նշելով, որ դրանք հնարավորություն են տալիս գնահատել սովորողների հիմնական գիտելիքները և կարողությունները: Միաժամանակ առաջարկեցին ուշադրություն դարձնել առաջադրանքների տարաբնույթությանը և հստակությանը՝ ապահովելով գնահատման առավել օբյեկտիվ և արդյունավետ իրականացումը:

Արտահայտվողները նշեցին, որ այս կիսամյակի համար նախընտրել են համատեղ կազմել ամփոփիչ աշխատանքները՝ հարմարեցնելով դասագրքի նյութերի և թեմաների հետ:

Որոշեցին՝ Հաստատել «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների համար կազմված ամփոփիչ աշխատանքերը:

Լսեցին 6. ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների մշակման, իրականացման և վերահսկման գործընթացը, ինչպես նաև դիտարկման թերթիկների պատշաճ լրացման վերաբերյալ կատարված աշխատանքները՝ տրամադրելով մանրամասն տեղեկատվություն: Նա ընդգծեց, որ բոլոր գործընթացներն իրականացվել են սահմանված չափորոշիչներին, կարգերին և մասնագիտական պահանջներին համապատասխան՝ ապահովելով յուրաքանչյուր աշակերտի անհատական

կրթական կարիքների հաշվառումը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը։

Նշվեց նաև, որ իրականացված աշխատանքները նպաստել են ուսումնական առաջադիմության համակարգված մշտադիտարկմանը, խնդիրների ժամանակին բացահայտմանը և համապատասխան աջակցող միջամտությունների պլանավորմանը՝ ուղղված ներառական կրթության որակի շարունակական բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի արդյունավետ և նպատակային կազմակերպումը՝ ընդգծելով ծնող-ուսուցիչ-աջակցության թիմի սերտ և համակարգված համագործակցության նշանակությունը։ Նա առանձնահատուկ շեշտադրեց օրացուցային-թեմատիկ պլաններով սահմանված նպատակների լիարժեք և արդյունավետ իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում։

Միաժամանակ կարևորեց դիտարկման թերթիկների ճիշտ, հետևողական և համակարգված լրացումը՝ նշելով, որ այդ գործիքակազմը հնարավորություն է տալիս ապահովել սովորողների ուսումնական առաջընթացի շարունակական մոնիթորինգ և օբյեկտիվ գնահատում։ Նրա խոսքով՝ նշված մոտեցումների կիրառումը էապես նպաստում է կրթական գործընթացի որակի բարձրացմանը և սովորողների անհատական զարգացման արդյունավետ կազմակերպմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը։

Լսեցին 7. 2-4-րդ դասարաններում «Մայրենի» առարկաների դրվածքի ուսումնասիրության մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողն առաջարկեց փետրվար ամսվա ընթացքում 2–4-րդ դասարաններում իրականացնել «Մայրենի» առարկայի ուսումնառության դիտարկում և վերլուծություն՝ նպատակ ունենալով գնահատել սովորողների գիտելիքների մակարդակը, բացահայտել առկա դժվարությունները և աջակցել ուսուցիչներին դրանց հաղթահարման գործում։

Նշվեց, որ նախաձեռնության շրջանակում նախատեսվում է նաև քննարկել դասավանդման մեթոդների կատարելագործման ուղիները, դասի արդյունավետության բարձրացման հնարավորությունները, ինչպես նաև փոխանակել առաջավոր փորձը՝ ապահովելու ուսումնական գործընթացի շարունակական բարելավումը։

Արտահայտվեցին՝ Ա. Դոլունցը, Տ. Փարսադանյանը։

Արտահայտվողները կարևորեցին առաջարկը՝ նշելով, որ նման դիտարկումները հնարավորություն են տալիս ժամանակին բացահայտել խնդիրները և կազմակերպել նպատակային աջակցություն։ Նրանք առաջարկեցին գործընթացն իրականացնել համակարգված ձևով և արդյունքները կիրառել հետագա դասավանդման բարելավման ուղղությամբ։

Արուս Դոլունցը կարևորեց «Մայրենի» առարկայի դրվածքը, ասաց, որ ուսումնասիրության համար ընտրվել է շատ լավ ընթացք, քանի որ փետրվարի 19-ին բոլոր դասարաններում նախատեսվում են Հովհաննես Թումանյանի և Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ նախատեսում է միջոցառումներ անցկացնել։

Տաթևիկ Փարսադանյանն ավելացրեց, որ նախատեսվում է նաև փետրվարի 21-ի, Մայրենիի օրվան նվիրված դաս-միջոցառումներ անցկացնել։

Որոշեցին՝ Հաջորդիվ ժամանակահատվածում «Մայրենի» առարկայից 2-4-րդ դասարաններում իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում։

Լսեցին 8. 3-4-րդ դասարաններում տետրերի ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց ուսումնադաստիարակչական տարեկան պլանի շրջանակում 3–4-րդ դասարաններում իրականացված տետրերի ստուգման արդյունքները։ Նա ընդգծեց տետրերի լավագույն օրինակները և առանձնացրեց այն ակնառու թերությունները, որոնք նկատվել են տետրերի վարման ընթացքում՝ մատնանշելով բարելավման անհրաժեշտ ուղղությունները։

Արտահայտվեցին՝ Կ. Պողոսյանը, Ն. Գալստըանը

Արտահայտվողները կարևորեցին տետրերի ստուգման գործընթացի նշանակությունը՝ նշելով, որ դա հնարավորություն է տալիս հետևողականորեն վերահսկել աշակերտների աշխատանքների որակը, գնահատել ուսուցիչների մեթոդական մոտեցումները և ժամանակին ուղղել հնարավոր բացթողումները ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար։

Կարինե Պողոսյանը նշեց, որ հատկապես տարրական դասարաններում ամենօրյա ռեժիմով ստուգվում են տնային աշխատանքները և դասարանում կատարած աշխատանքները։

Նունե Գալստյանը նշեց, որ հատկապես նոր չափորոշչի պահանջի համաձայն, գնահատականների բացակայության պայմաններում ծնողները տետրերում նշված բնութագրիչներով կարողանում են պատկերացում կազմել, թե աշակերտների մոտ ինչպիսի թերացումներ և բացթողումներ կան։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 3-4-րդ դասարաններում տետրերի ստուգման մասին տեղեկատվությունը։ Ստուգման արդյունքում նկատված բացթողումների ուղղությամբ լինել հետևողական և քայլեր ձեռնարկել տետրերի մաքրության ուղղությամբ։

Լսեցին 9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ։

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց ՈւԴԱՏՊ շրջանակում հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց համակարգված և նպատակաուղղված բնույթը։ Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսումնական գործընթացի կազմակերպման շարունակական վերահսկողություն, ինչպես նաև կազմակերպվել են նախապատրաստական աշխատանքներ՝ մարզային օլիմպիադաներին պատշաճ մասնակցություն ապահովելու նպատակով։

Անվտանգ և ապահով կրթական միջավայրի ապահովման տարվա միջոցառումների ժամանակացույցին համապատասխան անցկացվել է «Ճանաչենք մեր դպրոցը. անվտանգ մուտք և ելք» թեմայով բաց դաս, որը նախաձեռնվել էր դպրոցի Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանի և «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյանի կողմից՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի հետ համագործակցությամբ։

Բացի այդ, անցկացվել է Հայոց բանակի օրվան նվիրված դաս-միջոցառում, ինչպես նաև կազմակերպվել են բազմաբնույթ աշխատանքներ՝ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և ուսումնական միջավայրի շարունակական զարգացման ապահովման նպատակով։ Նշված միջոցառումները նպաստել են ոչ միայն կրթության որակի բարձրացմանը, այլև աշակերտների անվտանգության, հետաքրքրության և ակտիվ ներգրավվածության բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողներն ընդգծեցին, որ ՈւԴԱՏՊ-ի շրջանակում իրականացված աշխատանքները նպաստել են դասավանդման որակի բարձրացմանը և ուսումնական գործընթացի առավել համակարգված կազմակերպմանը։ Հատուկ շեշտադրեց ուսուցիչներին տրամադրվող մեթոդական աջակցության նշանակությունը, մասնավորապես՝ օրացուցային-թեմատիկ պլանների կազմման,

ուսումնական նպատակների հստակ ձևակերպման և ժամանակի արդյունավետ բաշխման գործընթացներում:
Միաժամանակ նշվեց, որ իրականացված խորհրդատվություններն ունեցել են դրական ազդեցություն դասավանդման որակի բարելավման և ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման վրա՝ ապահովելով հետագա աշխատանքի արդյունավետության բարձր մակարդակ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները:

Լսեցին 10. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունները: Ներկայացվեց աշխատանքների ընթացքը, անցկացված դասալսումները, տրամադրված մեթոդական աջակցությունները, ինչպես նաև կազմակերպված տարբեր նախաձեռնություններ՝ ընդգծելով դրանց նպատակաուղղվածությունը և արդյունավետությունը:
Անդրադարձ կատարվեց նոր ՀՊՉ-ի ներդրման արդյունքներին՝ ըստ կրթական աստիճանների, ինչպես նաև իրականացված աշխատանքներին էսսեագրության ոլորտում և ուսումնական նախագծերի իրականացման ընթացքին: Բացի այդ, առանձնակի ուշադրություն դարձվեց դպրոցի կառավարման արդյունավետությանը՝ հաշվի առնելով դրա կարևոր դերը ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպման և կրթական ծրագրերի որակի ապահովման գործում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները ընդգծեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքները հիմնականում իրականացվել են նախապես հաստատված պլանի համաձայն, ինչը ապահովել է ուսումնական գործընթացի նպատակային և համակարգված կազմակերպում: Նրանք նշեցին, որ միջոցառումների արդյունավետությունը մեծապես պայմանավորված էր ուսուցիչների պատասխանատու, հետևողական և ակտիվ մոտեցմամբ՝ ինչպես նախապատրաստական, այնպես էլ իրականացման փուլերում:
Միաժամանակ ընդգծվեց, որ այդ մոտեցումը նպաստել է աշակերտների համար արդյունավետ և ապահով ուսումնադաստիարակչական միջավայրի ստեղծմանը, բարձրացրել դասերի որակը, աջակցել անձի բազմակողմանի զարգացմանը և ամրապնդել կրթական ծրագրերի համընդհանուր արդյունավետությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունը (կցված է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 11. 3-4-րդ դասարաններում «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստման և գրավորների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ այս ուսումնական տարվա ընթացքում՝ կապված դպրոցի վերանորոգման աշխատանքների և դասապրոցեսի կազմակերպման առնչվող դժվարությունների հետ, տնօրենության կողմից նախատեսված գրավոր աշխատանքները՝ և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակներին, կիրականացվեն երկրորդ կիսամյակի ընթացքում: Ելնելով ուսումնական գործընթացի կազմակերպման դժվարություններից, գրավոր աշխատանքները անցկացվելու են

թղթային տարբերակով, ի տարբերություն նախորդ տարվա, երբ աշակերտները օգտվում էին QR կոդերից։

Նշվեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում՝ 3–4-րդ դասարաններում, տնօրենության կողմից նախատեսված գրավոր աշխատանքները կտրվեն թեստային տարբերակով՝ նախապես հաստատված օրինակներից։ Բացի այդ, կարևոր է ապահովել առարկայական չափորոշչային պահանջների խստապահանջ կատարումը՝ գնահատման ճշգրտությունն ու հստակությունը պահպանելու նպատակով։

Ձեկուցողը ընդգծեց, որ ուսուցիչները պետք է ստուգեն ոչ միայն իրենց դասարանների գրավոր աշխատանքները, այլ նաև կիրառեն խառը սկզբունքը՝ ապահովելով աշխատանքի օբյեկտիվ և անկախ գնահատում։

Հաշվի առնելով առկա պայմաններն ու ուսուցիչների առաջարկությունները, գրավոր աշխատանքները պետք է կազմակերպվեն հնարավորինս խախտումների բացառմամբ։ Թեստերի մի քանի տարբերակներից յուրաքանչյուր դասարանի համար պատահականության սկզբունքով կընտրվի մեկը՝ ուսումնական մասի ղեկավարի և մեթոդմիավորման նախագահի համատեղ վերահսկողությամբ։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները ընդգծեցին, որ ստեղծված պայմաններում անհրաժեշտ է պահպանել անաչառությունը և ապահովել գրավոր աշխատանքների իրականացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները, ինչը հնարավորություն կտա ճշգրիտ գնահատել աշակերտների գիտելիքների իրական մակարդակը։ Նրանք ընդգծեցին, որ միայն այս մոտեցման կիրառմամբ հնարավոր կլինի ստանալ օբյեկտիվ պատկեր և արդյունավետորեն գնահատել ուսումնական գործընթացի արդյունքները։

Որոշեցին՝

1. 3-4-րդ դասարաններում «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկաներից տալ տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ՝ 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար։
2. Հաստատել գրավոր աշխատանքների տարբերակները

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

«26» փետրվարի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Սիմոնյան Աննա (փոխարինում է Անուշ Աղաբեկյանին)
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից 3-4-րդ դասարաններում 1-ին կիսամյակի տնօրենության կողմից գրավոր աշխատանքների ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. 2-րդ դասարաններում «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից իրականացված ստուգատեսի մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. 1-2-րդ դասարաններում տետրերի ստուգման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. 1-4-րդ դասարաններում «Մայրենի» առարկաների դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
9. 1-4-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Լսեցին 1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ կատարելով համակողմանի վերլուծություն և ամփոփելով ձեռք բերված արդյունքները: Նա մանրամասն անդրադարձավ իրականացված աշխատանքներին՝ ընդգծելով դրանց կազմակերպվածությունն ու նպատակային բնույթը: Զեկուցողը նաև նշեց, որ նախորդ նիստում ընդունված որոշումները և նախատեսված միջոցառումները լիարժեք իրականացվել են սահմանված ժամկետներում՝ ապահովելով գործընթացի արդյունավետ և համակարգված ընթացքը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները բարձր գնահատեցին ներկայացված հաշվետվությունը՝ նշելով, որ կատարված աշխատանքները վկայում են մեթոդմիավորման համակարգված և նպատակային գործունեության մասին: Նրանք ընդգծեցին, որ նախորդ նիստում ընդունված որոշումների լիարժեք և ժամանակին իրականացումը նպաստել է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և դրական արդյունքների ապահովմանը: Միևնույն ժամանակ, արտահայտվողները կարևորեցին նման շարունակական վերլուծությունների իրականացումը՝ հետագա աշխատանքների պլանավորումն ավելի հիմնավորված և նպատակային դարձնելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատյաններում արձանագրված բացթողումները՝ կատարելով դրանց պատճառների վերլուծություն և առանձնացնելով առավել հաճախ հանդիպող թերությունները: Նա կարևորեց էլեկտրոնային մատենավարության պարբերական ստուգման և վերահսկման անհրաժեշտությունը՝ ընդգծելով լրացման սահմանված կանոնների խստիվ պահպանման կարևորությունը: Զեկուցողը շեշտեց, որ մատենավարությունը պետք է իրականացվի օրացուցային-թեմատիկ պլաններին լիարժեք համապատասխան՝ ապահովելով ուսումնական գործընթացի հստակ կազմակերպում և վերահսկելիություն:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ա. Առստամյանը:

Արտահայտվողները նշեցին, որ էլեկտրոնային մատյանների պատշաճ վարումը կարևոր նախապայման է ուսումնական գործընթացի թափանցիկության և արդյունավետության ապահովման համար: Նրանք կարևորեցին նաև ուսուցիչների պատասխանատվության բարձրացումը և առաջարկեցին պարբերաբար իրականացնել վերահսկողություն ու մեթոդական աջակցություն՝ բացթողումները նվազեցնելու և մատենավարության որակը բարձրացնելու նպատակով:

Արաքսյա Առստամյանը նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններն իսկապես շատ են օգնում պատշաճ մատենավարության իրականացմանը, ինչի մասին բազմիցս նշվել է: Արտահայտվողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարում բացթողումներն անհամեմատ քիչ են, իսկ վարչական միջամտություններ առհասարակ չեն կատարվել: Տարրական կրթության մասով բոլոր դասվարների մոտ լրացումները իրականացվում է ժամանակին, պատշաճ:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել

դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար։

Լսեցին 4. «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից 3-4-րդ դասարաններում 1-ին կիսամյակի տնօրենության կողմից գրավոր աշխատանքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց գրավոր աշխատանքների արդյունքների համակողմանի վերլուծությունը՝ անդրադառնալով սովորողների առաջադիմությանը, գիտելիքների մակարդակին, ինչպես նաև առավել հաճախ հանդիպող սխալներին և դրանց առաջացման պատճառներին։ Նա առանձնացրեց այն թեմաները, որոնց շրջանակում սովորողները ցուցաբերել են համեմատաբար ցածր արդյունքներ՝ մատնանշելով դրանց վրա առավել նպատակային աշխատանքի անհրաժեշտությունը։

Նշվեց, որ ընդհանուր արդյունքները կարելի է գնահատել բավարար, սակայն առկա են որոշակի բացթողումներ, որոնք պահանջում են լրացուցիչ ուշադրություն, խորացված ուսուցում և կրկնություն։ Զեկուցողը կարևորեց լրացուցիչ աշխատանքների նպատակային կազմակերպումը՝ շեշտելով անհատական և տարբերակված մոտեցման կիրառման անհրաժեշտությունը՝ արձանագրված թերությունները վերացնելու և սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին գրավոր աշխատանքների արդյունքների պարբերական վերլուծությունը՝ որպես ուսուցման որակի բարձրացման կարևոր միջոց։

Արտահայտվողները կարևորեցին կատարված վերլուծության գործնական նշանակությունը՝ նշելով, որ այն հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացնել սովորողների իրական կարողություններն ու դժվարությունները։ Նրանք առաջարկեցին պարբերաբար իրականացնել նմանատիպ վերլուծություններ և ուժեղացնել հետադարձ կապը սովորողների հետ՝ ապահովելու ուսումնառության շարունակական բարելավումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 5. 2-րդ դասարաններում «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից իրականացված ստուգատեսի մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ փետրվարի 20-ին Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարանների սովորողները մասնակցեցին գիտելիքների ստուգման գործընթացի։ Այն անց է կացվել 2-րդ դասարանցիների համար։ Ստուգման նպատակն էր պարզել 1-ին դասարանի ուսումնական ծրագրի բովանդակության յուրացման մակարդակը և գնահատել սովորողների պատրաստվածությունը հետագա ուսումնական փուլերի համար։ Գրավոր աշխատանքները սովորողների համար կրում էին ոչ պարտադիր բնույթ՝ ապահովելով հանգիստ և աջակցող միջավայր, որտեղ երեխաները կարող էին առավել ազատ դրսևորել իրենց գիտելիքները։ Աշխատանքները «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից իրականացվեցին դասվարներ Իրինա Ջավահիրյանի, Անահիտ Աղաբեկյանի, Տաթևիկ Փարսադանյանի և Տարրական կրթության մեթոդմիավորման նախագահի վերահսկողությամբ։

Գիտելիքների ստուգման արդյունքներով արձանագրվել է հետևյալ պատկերը.

- 2-րդ «Ա» դասարան – մասնակցել է 21 սովորող, որից՝ 1 սովորող ստացել է 5, 3 սովորող ստացել է 8, 10 սովորող ստացել է 9, 7 սովորող ստացել է 10,
- 2-րդ «Բ» դասարան – մասնակցել է 20 սովորող, որից՝ 1 սովորող ստացել է 6, 1 սովորող ստացել է 7, 6 սովորող ստացել է 8, 4 սովորող ստացել է 9, 7 սովորող ստացել է 10: Դասարանում կա 1 ԿԱՊԿ ունեցող սովորող, որը ստացել է 6,
- 2-րդ «Գ» դասարան – մասնակցել է 21 սովորող, որից՝ 1 սովորող ստացել է 7, 3 սովորող ստացել է 8, 5 սովորող ստացել է 9, 10 սովորող ստացել է 10:

Ամփոփ արդյունքները, արձանագրված համապատասխան ձևաթղթերում, վկայում են սովորողների բարձր առաջադիմության և ուսումնական նյութի հաջող յուրացման մասին: Ստացված տվյալները հնարավորություն են տալիս ուսուցիչներին առավել նպատակային պլանավորել հետագա աշխատանքը՝ պահպանելով կրթության որակը և ապահովելով շարունակական զարգացում:

Արտահայտվեցին՝ Իրինա Ջավահիրյանը, Անահիտ Աղաբեկյան և Տաթևիկ Փարսադանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ աշակերտները լարված չէին, աշխատանքները կատարել են կարճ ժամանակահատվածում: Ամփոփ արդյունքները, որոնք արձանագրվեցին համապատասխան ձևաթղթերում, վկայում են սովորողների բարձր առաջադիմության և ուսումնական նյութի հաջող յուրացման մասին:

Արտահայտվողները կարևորեցին գիտելիքների ստուգման գործընթացը՝ նշելով, որ այն հնարավորություն է տալիս հստակ գնահատել սովորողների ուսումնառության մակարդակը և ուղղորդել հետագա դասավանդման ծրագրերը:

Նրանք շեշտեցին, որ ոչ պարտադիր բնույթը նպաստել է երեխաների հանգստությանը, ինքնավստահությանը և ակտիվ մասնակցությանը, ինչը բարձրացրել է ստուգման արդյունավետությունը:

Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ ստուգման արդյունքները պետք է ծառայեն ոչ միայն հաջորդ դասընթացների պլանավորման համար, այլև լրացուցիչ աջակցության և նպատակային ուսուցման իրականացման համար, որպեսզի բոլոր սովորողները լիարժեք յուրացնեն նախորդ տարի անցած նյութը և ապահովվի ուսումնական գործընթացի հետևողական զարգացումը:

Որոշեցին՝ 2-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարանների սովորողների գիտելիքների ստուգման գործընթացի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին 6. 1-2-րդ դասարաններում տետրերի ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց ուսումնադաստիարակչական տարեկան պլանի շրջանակում 1–2-րդ դասարաններում իրականացված տետրերի ստուգման արդյունքները՝ կատարելով համակողմանի վերլուծություն: Նա առանձնացրեց տետրերի լավագույն օրինակները՝ որպես դրական փորձի տարածման հիմք, և միաժամանակ անդրադարձավ այն ակնառու թերություններին, որոնք նկատվել են տետրերի վարման ընթացքում: Զեկուցողը մատնանշեց բարելավման հիմնական ուղղությունները՝ ընդգծելով գրառումների հստակության, ձևավորման կանոնների պահպանման և աշխատանքների համակարգվածության կարևորությունը:

Արտահայտվեցին՝ Ա. Հարությունյանը, Վ. Գրիգորյանը, Ի. Ջավահիրյանը

Առաջին դասարանների դասվարները նշեցին, որ արդեն ավարտել են այբբենական շրջանը և աշակերտներն արդեն տառաճանաչ են, գրում են արտագրություններ և թելադրություններ: Դասվարները կարևորեցին տետրերի ստուգման գործընթացի նշանակությունը՝ նշելով, որ դա հնարավորություն է տալիս հետևողականորեն վերահսկել աշակերտների աշխատանքների որակը, գնահատել ուսուցիչների մեթոդական մոտեցումները

և ժամանակին ուղղել հնարավոր բացթողումները ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար։
Իրինա Ջավահիրյանը նշեց, որ հատկապես տարրական դասարաններում ամենօրյա ռեժիմով ստուգվում են տնային աշխատանքները և դասարանում կատարած աշխատանքները, հատկապես նոր չափորոշչի պահանջի համաձայն, գնահատականների բացակայության պայմաններում ծնողները տետրերում նշված բնութագրիչներով կարողանում են պատկերացում կազմել, թե աշակերտների մոտ ինչպիսի թերացումներ և բացթողումներ կան։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 1-2-րդ դասարաններում տետրերի ստուգման մասին տեղեկատվությունը։ Ստուգման արդյունքում նկատված բացթողումների ուղղությամբ լինել հետևողական և քայլեր ձեռնարկել տետրերի մաքրության ուղղությամբ։

Լսեցին 7. 1-4-րդ դասարաններում «Մայրենի» առարկաների դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց փետրվար ամսվա ընթացքում 1–4-րդ դասարաններում «Մայրենի» առարկայի ուսումնասիրության արդյունքները՝ ընդգծելով իրականացված աշխատանքների համակողմանի և նպատակային բնույթը։ Նշվեց, որ գործընթացի շրջանակում իրականացվել են դասալսումներ, դիտարկումներ և վերլուծություններ, որոնց նպատակն էր գնահատել սովորողների գիտելիքների մակարդակը, բացահայտել առկա դժվարությունները և տրամադրել համապատասխան մեթոդական աջակցություն ուսուցիչներին՝ դրանց հաղթահարման ուղղությամբ։
Զեկուցողը նաև նշեց, որ ուսումնադաստիարակչական պլանի շրջանակում բոլոր դասարաններում կազմակերպվել և անցկացվել են թեմատիկ դաս-միջոցառումներ՝ նվիրված Հովհաննես Թումանյան-ի ծննդյան տարեդարձին, Գիրք նվիրելու օրվան, ինչպես նաև փետրվարի 21-ին նշվող Մայրենի լեզվի միջազգային օրվան։ Այս միջոցառումները նպաստել են սովորողների լեզվական կարողությունների զարգացմանը, ընթերցասիրության խթանմանը և ազգային մշակութային արժեքների արժևորմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։
Արտահայտվողները կարևորեցին կատարված աշխատանքների արդյունավետությունը՝ նշելով, որ նման համակողմանի ուսումնասիրությունները և թեմատիկ միջոցառումները նպաստում են սովորողների հետաքրքրության բարձրացմանը և ուսումնական գործընթացի ակտիվացմանը։ Նրանք առաջարկեցին շարունակել նման նախաձեռնությունները՝ առավել ընդգծելով ստեղծագործական և մասնակցային բաղադրիչները։
Տաթևիկ Փարսադանյանն ավելացրեց, որ փետրվարի 21-ի, Մայրենիի օրվան նվիրված դաս-միջոցառումները աշակերտների մոտ դաստիարակում են սեր մայրենիի նկատմամբ, որը շատ կարոր է անաղարտ հայերենով արտահայտվելուն։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 1-4-րդ դասարաններում «Մայրենի» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում փետրվար ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ աշխատանքների

համակողմանի ամփոփ պատկերը՝ կատարելով դրանց արդյունավետության վերլուծություն։

Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում տարրական կրթության մեթոդմիավորման ուսուցիչների կողմից իրականացվել են բազմաբնույթ կազմակերպչական, ուսումնական և դաստիարակչական միջոցառումներ, որոնք ունեցել են հստակ նպատակային ուղղվածություն։ Հատուկ ուշադրություն է դարձվել սովորողների ընթերցանության մշակույթի ձևավորմանը, խոսքի զարգացմանը, վերլուծական մտածողության խթանմանը, ինչպես նաև ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը։ Կարևորվել է սովորողների ակտիվ ներգրավվածությունը տարբեր կրթական նախաձեռնություններում և միջոցառումներում։

Զեկուցողն անդրադարձավ նաև առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին սովորողների մասնակցությանը՝ ընդգծելով նրանց պատրաստվածության մակարդակը և ձեռքբերումները։ Միաժամանակ ներկայացվեցին դպրոցի ղեկավար կազմի՝ տնօրենի, տնօրենի տեղակալի, մեթոդմիավորման նախագահի և զեկուցողի կողմից իրականացված վերահսկողական և մշտադիտարկման աշխատանքները, որոնք միտված են եղել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և որակի ապահովմանը։

Ամփոփելով՝ նշվեց, որ փետրվար ամսվա ընթացքում նախատեսված աշխատանքներն իրականացվել են լիարժեք և սահմանված ծավալով՝ ապահովելով դրական արդյունքներ։ Դրանք նպաստել են սովորողների գիտելիքների ամրապնդմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրվածության և ներքին մոտիվացիայի բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ռ. Շալունցը։

Արտահայտվողները կարևորեցին առարկայական օլիմպիադաների մարզային փուլին սովորողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը՝ ընդգծելով, որ արձանագրվել է առաջադիմության նկատելի դրական տեղաշարժ։ Նրանք շեշտեցին, որ նման մրցույթներին մասնակցությունը նպաստում է սովորողների գիտելիքների խորացմանը, մրցակցային մտածողության ձևավորմանը և ինքնադրսևորման հնարավորությունների ընդլայնմանը։ Միաժամանակ բարձր գնահատվեց փետրվար ամսվա ընթացքում կազմակերպված միջոցառումների արդյունավետությունն ու դաստիարակչական նշանակությունը՝ ընդգծելով դրանց դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման և կրթական գործընթացի ակտիվացման գործում։

Ռիտա Շալունցն իր ելույթում անդրադարձավ նաև աշխատանքային գործընթացում ի հայտ եկած որոշ դժվարություններին՝ ներկայացնելով դրանց պատճառները և առաջարկելով հաղթահարման գործնական ուղիներ։ Նա կարևորեց համագործակցության խորացումը, մեթոդական աջակցության շարունակականությունը և փորձի փոխանակման ակտիվացումը՝ որպես խնդիրների լուծման արդյունավետ միջոցներ։ Միաժամանակ ներկայացրեց մի շարք առաջարկություններ՝ ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը, ուսուցման որակի բարձրացմանը և հետագա գործունեության շարունակական կատարելագործմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Լսեցին 9. 1-4-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ 1–4-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման գործընթացը կազմակերպվում և իրականացվում է գործող իրավական և մեթոդական փաստաթղթերի պահանջներին լիակատար համապատասխանությամբ՝ ապահովելով գործընթացի համակարգված և նպատակային ընթացքը: Նա ներկայացրեց դասավանդման ընթացքում կիրառվող ժամանակակից ուսուցման մեթոդները՝ ընդգծելով դրանց դերը սովորողների ակտիվ մասնակցության խթանման և ուսումնառության արդյունավետության բարձրացման գործում: Անդրադարձ կատարվեց նաև ուսումնառության արդյունքների ապահովման գործիքներին՝ համապատասխան չափորոշչային պահանջներին, ինչպես նաև ուսուցիչների կողմից կիրառվող ձևավորող գնահատման մեխանիզմներին, որոնք նպաստում են սովորողների շարունակական առաջընթացի ապահովմանը:

Զեկուցողը հատկապես ընդգծեց, որ ուսումնական գործընթացում առաջնահերթություն է տրվում սովորողակենտրոն մոտեցմանը, ինտեգրված դասերի կազմակերպմանը, ինչպես նաև նախագծային և հետազոտական աշխատանքներին, որոնք հանդիսանում են նոր չափորոշչի առանցքային բաղադրիչներ: Նա կարևորեց առարկայական ծրագրերի և օրացուցային-թեմատիկ պլանների համապատասխանությունը նոր ՀՊՉ պահանջներին՝ շեշտելով նաև ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպման, դրանց իրականացման մակարդակի շարունակական վերահսկման և գնահատման անհրաժեշտությունը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները բարձր գնահատեցին նոր չափորոշիչների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ նշելով, որ գործընթացը կազմակերպված է համակարգված և նպատակային: Նրանք կարևորեցին հատկապես սովորողակենտրոն և ձևավորող գնահատման մոտեցումների կիրառումը՝ ընդգծելով դրանց արդյունավետությունը սովորողների ներգրավվածության և առաջընթացի ապահովման տեսանկյունից: Միաժամանակ առաջարկեցին շարունակել փորձի փոխանակումը, կազմակերպել փոխադարձ դասալսումներ և մեթոդական քննարկումներ՝ գործընթացն առավել արդյունավետ և կայուն դարձնելու նպատակով:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումը՝ շեշտելով վերապատրաստումների, մեթոդական խորհրդատվությունների և փորձի փոխանակման նշանակությունը կրթության որակի բարձրացման գործում: Նա ընդգծեց, որ ընթացիկ վերահսկողության շրջանակում պարբերաբար իրականացվում են դասալսումներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել ուսուցման գործընթացի արդյունավետությունը, բացահայտել առկա խնդիրները և ապահովել նոր մոտեցումների նպատակային ու որակյալ կիրառման վերահսկողությունը:

Նշվեց, որ նոր ՀՊՉ-ի ներդրման գործընթացում արդեն իսկ նկատվում են դրական առաջընթացներ՝ կապված սովորողակենտրոն ուսուցման մեթոդների կիրառման, ակտիվ ուսուցման ձևերի ընդլայնման և ուսումնառության արդյունքների ավելի հստակ ձևակերպման հետ: Միաժամանակ ընդգծվեց, որ առկա են նաև որոշակի մարտահրավերներ, որոնք հիմնականում վերաբերում են նոր մեթոդական մոտեցումների լիարժեք յուրացմանը, ուսումնական ժամանակի արդյունավետ կառավարմանը և ուսումնառության բովանդակության նպատակային պլանավորմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 1-4-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

«26» մարտի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Աղաբեկյան Անուշ
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էին տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տարրական կրթության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Տարրական կրթության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ համառոտ անդրադառնալով

իրականացված աշխատանքներին և դրանց արդյունավետությանը: Նա նշեց, որ կատարված քայլերը նպաստել են ուսումնական գործընթացի կազմակերպվածության և որակի բարելավմանը:

Ամփոփելով՝ զեկուցողը ընդգծեց, որ նախատեսված բոլոր միջոցառումները՝ դասալսումները, մասնագիտական քննարկումները, մեթոդական աշխատանքները և փորձի փոխանակման նախաձեռնությունները, իրականացվել են լիարժեք և նպատակային՝ բարձր պատասխանատվությամբ:

Կարևորվեց համագործակցային աշխատանքը, որը նպաստել է ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ու նոր մոտեցումների կիրառմանը:

Նշվեց նաև, որ ընդունված բոլոր հանձնարարականները կատարվել են սահմանված ժամկետներում և պատշաճ որակով՝ նպաստելով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և սովորողների կրթական արդյունքների բարելավմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները ընդհանուր առմամբ բարձր գնահատեցին մեթոդմիավորման կատարած աշխատանքները՝ ընդգծելով դրանց կազմակերպվածությունն ու նպատակային ուղղվածությունը: Նշվեց, որ միջոցառումները իրականացվել են համակարգված և արդյունավետ կերպով՝ նպաստելով ուսումնական գործընթացի շարունակական զարգացմանը:

Մասնակիցները կարևորեցին, որ իրականացված աշխատանքները նպաստել են դասերի արդյունավետության բարձրացմանը, սովորողների ակտիվ ներգրավվածությանը և դասավանդման որակի բարելավմանը: Արձանագրվեց նաև, որ կիրառված մեթոդներն ու մոտեցումները նպաստել են սովորողների հետաքրքրվածության աճին և ուսումնական նյութի ավելի արդյունավետ յուրացմանը:

Միաժամանակ առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ ուշադրություն դարձնելով նորարարական մեթոդների կիրառմանը, ժամանակակից կրթական գործիքների ներմուծմանը և ուսուցիչների միջև փորձի փոխանակման ընդլայնմանը՝ ապահովելու կրթական գործընթացի հետագա զարգացումն ու կատարելագործումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների դերը՝ ընդգծելով, որ դրանք արդյունավետ միջոց են ուսուցիչների մասնագիտական զարգացման, փորձի փոխանակման և համագործակցային մթնոլորտի ձևավորման համար: Նա նշեց, որ անհրաժեշտ է ձևավորել փոխվստահության և աջակցության միջավայր, որտեղ ուսուցիչները կարող են ազատորեն կիսվել իրենց փորձով, քննարկել դժվարությունները և ստանալ մասնագիտական աջակցություն:

Նշվեց նաև, որ ուսուցիչները պետք է կիրառեն բազմազան և նորարարական մեթոդներ՝ նպաստելով սովորողների հետաքրքրությունների ձևավորմանը, ինքնուրույն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Ընդգծվեց սովորողի ակտիվ ներգրավվածության կարևորությունը՝ որպես ուսուցման արդյունավետության հիմնական պայման:

Միաժամանակ առաջարկվեց յուրաքանչյուր դասալսումից հետո կազմակերպել պարտադիր մասնագիտական քննարկումներ՝ մեթոդմիավորման ուսուցիչների մասնակցությամբ, ինչը հնարավորություն կտա վերլուծել դասը, բացահայտել ուժեղ և բարելավման ենթակա կողմերը և մշակել գործնական քայլեր:

Զեկուցողը նաև կարևորեց նոր ՀՊՉ-ների ներդրումը՝ շեշտելով դրանց արդյունավետ կիրառումը, ինչպես նաև 1–4-րդ դասարաններում

դասալսումների պարբերական կազմակերպումն ու դրանց արդյունքների շարունակական քննարկումը՝ ապահովելու կրթական գործընթացի որակի բարձրացումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին փոխադարձ դասալսումների դերը՝ ընդգծելով, որ դրանք նպաստում են ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, փորձի փոխանակմանը և համագործակցային մթնոլորտի ձևավորմանը։ Նշվեց, որ նման ձևաչափը հնարավորություն է տալիս դիտարկել տարբեր մոտեցումներ և փոխադարձաբար սովորել միմյանցից՝ բարձրացնելով ուսուցման որակը։

Մասնակիցները կարևորեցին նաև փոխվստահության և աջակցող միջավայրի ձևավորումը, որտեղ հնարավոր է բաց և կառուցողական քննարկում իրականացնել, ներկայացնել փորձը և ստանալ մասնագիտական աջակցություն։

Արտահայտվողները համակարծիք էին, որ ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան անհրաժեշտ է կիրառել բազմազան և նորարարական մեթոդներ՝ խթանելու սովորողների հետաքրքրվածությունը, ակտիվությունը և ստեղծագործական մտածողությունը։ Շեշտվեց սովորողակենտրոն մոտեցումների կարևորությունը՝ որպես ինքնուրույն և վերլուծական կարողությունների զարգացման հիմք։

Միաժամանակ առաջարկվեց յուրաքանչյուր դասալսումից հետո կազմակերպել պարտադիր քննարկումներ՝ ապահովելու դասի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը և հետագա բարելավման ուղղությունների հստակեցումը։

Վերջում կարևորվեց նոր ՀՊՉ-ների արդյունավետ կիրառումը և դասալսումների ընթացքում բարձրացված հարցերի շուրջ պարբերական քննարկումների անցկացումը՝ կրթական գործընթացի շարունակական բարելավման նպատակով։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև մյուս մեթոդական միավորումների ուսուցիչների հետ։

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը անդրադարձավ էլեկտրոնային մատենավարության ընթացքին՝ ներկայացնելով իրականացված դիտարկումների արդյունքները և արձանագրված խնդիրները։ Նշվեց, որ որոշ դեպքերում գրանցումները կատարվել են ոչ ամբողջական կամ սահմանված ժամկետներից ուշ, այդ թվում՝ դասերի թեմաների լրացման բացթողումներ։

Ընդգծվեց, որ մատենավարությունը ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ է, և դրա պատշաճ վարումը անհրաժեշտ է գործընթացի վերահսկելիության և որակի ապահովման համար։ Անդրադարձ կատարվեց նաև բնութագրիչների պահպանման գործընթացին, ինչը հետագայում կարող է հեշտացնել դրանց հաստատումը։

Զեկուցողը հիշեցրեց սահմանված ժամկետները և կարևորեց դրանց խիստ պահպանումը՝ հորդորելով ուսուցիչներին առավել պատասխանատու մոտեցում ցուցաբերել և ապահովել բոլոր գրանցումների ժամանակին ու ճիշտ իրականացումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը ընդգծեց էլեկտրոնային մատենավարության նկատմամբ մշտական և հետևողական վերահսկողության կարևորությունը՝ նշելով, որ դա հնարավորություն է տալիս ժամանակին հայտնաբերել և վերացնել առկա թերությունները, ինչպես նաև ապահովել սահմանված պահանջների լիարժեք կատարումը։ Նա հիշեցրեց մատենավարության վարման հիմնական

կանոնները և հորդորեց ուսուցիչներին ցուցաբերել առավել ուշադիր և պատասխանատու մոտեցում՝ ապահովելով տվյալների ճշգրտությունն ու ամբողջականությունը։

Արտահայտվողները կարևորեցին բարձրացված հարցերի արդիականությունը՝ ընդգծելով, որ էլեկտրոնային մատենավարության ճիշտ վարումը ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևոր նախապայման է։ Նշվեց, որ արձանագրված թերությունները պահանջում են արագ արձագանք և կանխարգելում։

Մասնակիցները համակարծիք էին, որ թեմաների չլրացումը պետք է բացառվեն։

Միաժամանակ առաջարկվեց կազմակերպել պարբերական վերապատրաստումներ և ուժեղացնել ներքին վերահսկողությունը՝ մատենավարության որակի բարձրացման և բացթողումների կանխարգելման նպատակով։

Վերջում հորդորվեց ապահովել առավել հետևողական և կարգապահ աշխատանք՝ կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար։

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն։ Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց նպատակային և բովանդակային ուղղվածությունը։ Նա նշեց, որ իրականացվել են բազմաբնույթ ուսումնադաստիարակչական միջոցառումներ՝ միտված սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը։

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են դասղեկական ժամեր, թեմատիկ զրույցներ, Մարտի 8-ին նվիրված միջոցառումներ, ինչպես նաև առարկայական շաբաթներ և այլ նախաձեռնություններ՝ ապահովելով սովորողների ակտիվ ներգրավվածությունը։ Կարևորվեց նաև արտադասարանական աշխատանքների իրականացումը, որոնք նպաստել են սովորողների հետաքրքրությունների զարգացմանը և ստեղծագործական կարողությունների խթանմանը։

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց կարգապահության ամրապնդմանը, հաճախելիության վերահսկմանը և ծնողների հետ համագործակցության արդյունավետությանը։ Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ իրականացված աշխատանքները եղել են արդյունավետ և նպաստել են ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները դրական գնահատեցին իրականացված աշխատանքները՝ ընդգծելով դրանց կազմակերպվածությունն ու դաստիարակչական ուղղվածությունը։ Նշվեց, որ իրականացված միջոցառումները նպաստել են սովորողների համակողմանի զարգացմանը և ակտիվ մասնակցությանը։

Մասնակիցները կարևորեցին հատկապես արտադասարանական նախաձեռնությունների դերը՝ նշելով, որ դրանք նպաստում են սովորողների

հետաքրքրությունների բացահայտմանը և ստեղծագործական կարողությունների զարգացմանը։
Միաժամանակ ընդգծվեց կարգապահության պահպանման, հաճախելիության վերահսկման և ծնողների հետ համագործակցության շարունակականության կարևորությունը՝ որպես արդյունավետ ուսումնական գործընթացի ապահովման հիմք։
Վերջում առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ ընդլայնելով նախաձեռնությունները և կիրառելով նոր մոտեցումներ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մարտ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատել լավ։ Շարունակել աշխատանքները ըստ հաստատված տարեկան պլանի՝ առավել ուշադրություն դարձնելով սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը, կարգապահության ամրապնդմանը և դաստիարակչական միջոցառումների բազմազանությանը։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում հունվար–փետրվար ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց համակարգված և նպատակային բնույթը։ Նա անդրադարձավ հիմնական ուղղություններին՝ դասալսումներին, մեթոդական աջակցությանը և ուսուցիչների մասնագիտական զարգացմանը միտված նախաձեռնություններին՝ նշելով դրանց դրական ազդեցությունը ուսուցման որակի վրա։
Նշվեց նաև նոր ՀՊՉ-ների ներդրման ընթացքը՝ ըստ կրթական աստիճանների, ընդգծելով դրանց արդյունավետ կիրառման ուղղությամբ իրականացվող աշխատանքները և առկա խնդիրների շարունակական քննարկումը։ Կարևորվեց էսսեագրության զարգացումը և ուսումնական նախագծերի իրականացումը՝ որպես սովորողների վերլուծական, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացման միջոց։
Միաժամանակ ընդգծվեց դպրոցի կառավարման արդյունավետության դերը՝ որպես կրթական գործընթացի հաջող կազմակերպման կարևոր նախապայման։ Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են կրթական գործընթացի որակի բարձրացմանն ու զարգացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները դրական գնահատեցին ներկայացված հաշվետվությունը՝ ընդգծելով իրականացված աշխատանքների արդյունավետությունն ու նպատակային ուղղվածությունը։ Նշվեց, որ դասալսումները և մեթոդական աջակցությունը նպաստել են ուսուցման որակի բարձրացմանը։
Մասնակիցները կարևորեցին նոր ՀՊՉ-ների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ ընդգծելով դրանց շարունակական կիրառման և խնդիրների լուծման անհրաժեշտությունը։ Դրական գնահատվեց նաև էսսեագրության և նախագծային ուսուցման զարգացումը։
Վերջում ընդգծվեց կառավարման արդյունավետության կարևորությունը և առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ ապահովելու կրթական գործընթացի հետագա զարգացումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 7. Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ դասվար Տաթևիկ Փարսադանյանը նախատեսում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նրա կատարած աշխատանքի նկատմամբ իրականացնել անհատական վերահսկողություն և մասնագիտական գործունեության մշտադիտարկում:

Զեկուցողն առաջարկեց դպրոցի հաջորդ մանկավարժական խորհրդի նիստում քննարկել հարցը և տնօրենին առաջարկել հաջորդող ժամանակահատվածում Տաթևիկ Փարսադանյանի մոտ իրականացնել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկումներ: Մասնավորապես նախատեսվում է ուշադրություն դարձնել էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ աշխատանքների կազմմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին:

Զեկուցողը նաև առաջարկեց ձևավորել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- Տարրական կրթության մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան
- դասվար Կարինե Մալխասյան,
- դասվար Կարինե Պողոսյան:

Զեկուցողը նաև առաջարկեց իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել տարրական կրթության մեթոդմիավորման հաջորդ նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Արմիդա Գևորգյանը

Արտահայտվողները բարձր գնահատեցին Տաթևիկ Փարսադանյանի նախաձեռնությունը՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու վերաբերյալ՝ այն դիտարկելով որպես մասնագիտական աճի, ինքնակատարելագործման ձգտման և պատասխանատու վերաբերմունքի վառ դրսևորում: Ընդգծվեց, որ նման նախաձեռնությունները ոչ միայն նպաստում են տվյալ ուսուցչի զարգացմանը, այլև խթանում են կրթական միջավայրում որակի բարձրացման ընդհանուր գործընթացը:

Մասնակիցները կարևորեցին նաև իրականացվող աշխատանքների արդյունավետության գնահատման նպատակով մշտադիտարկումների անցկացումը՝ նշելով, որ դրանք հնարավորություն են տալիս ապահովելու ուսուցչի մասնագիտական գործունեության առավել համակարգված, հիմնավորված և բազմակողմանի գնահատում, ինչպես նաև նպաստում են հաջողված փորձի վերհանմանն ու տարածմանը:

Իրինա Ջավահիրյանն ընդգծեց, որ մշտադիտարկումների իրականացումը կարևոր գործիք է ուսուցչի աշխատանքային գործունեությունը խորությամբ ուսումնասիրելու համար՝ հնարավորություն ընձեռելով բացահայտել արդյունավետ մեթոդներն ու մոտեցումները, որոնք հետագայում կարող են կիրառվել նաև այլ ուսուցիչների կողմից՝ նպաստելով կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը:

Արուս Դոլունցը կարևորեց համապատասխան հանձնաժողովի ձևավորումը՝ շեշտելով, որ նման կառուցվածքային մոտեցումը նպաստում է գնահատման գործընթացի օբյեկտիվության, թափանցիկության և վստահելիության բարձրացմանը:

Արմիդա Գևորգյանը՝ կարևորեց գործընկերային աջակցության և փորձի փոխանակման դերը՝ նշելով, որ դրանք հանդիսանում են ուսուցչի մասնագիտական զարգացման կարևորագույն բաղադրիչներ: Նա վստահություն հայտնեց, որ իրականացվող մշտադիտարկումները կունենան նաև գործնական ազդեցություն՝ նպաստելով դասավանդման որակի շարունակական բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ, արտահայտվողները դրական գնահատեցին ներկայացված առաջարկը՝ կարևորելով դրա իրականացումը սահմանված կարգով և նպատակային շարունակականությամբ:

Որոշեցին՝

1. Մանկավարժական խորհրդի նիստում քննարկել դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողության և մասնագիտական գործունեության մշտադիտարկում՝ ուշադրություն դարձնելով էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ աշխատանքների կազմմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին:
2. Մանկավարժական խորհրդին առաջարկել ձևավորել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
   - տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
   - ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
   - Տարրական կրթության մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց,
   - հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան
   - դասվար Կարինե Մալխասյան,
   - դասվար Կարինե Պողոսյան:
3. Իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել մանկավարժական խորհրդի, արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման հաջորդող նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

«21» ապրիլի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական կրթության մեթոդմիավորման» բոլոր անդամները.

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Աղաբեկյան Անուշ
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էին տնօրենի պաշտոնակատար Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
6. Գրաճանաչության ստուգում առաջին դասարաններում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատյաններում արձանագրված բացթողումները՝ մատնանշելով դրանց հիմնական պատճառներն ու հնարավոր հետևանքները: Նա կարևորեց էլեկտրոնային մատենավարության պարբերական և նպատակային ստուգման իրականացումը՝ որպես գործընթացի վերահսկելիության և տվյալների ճշգրտության ապահովման կարևոր գործիք:

Միաժամանակ ընդգծվեց, որ անհրաժեշտ է խստորեն պահպանել էլեկտրոնային մատյանների լրացման սահմանված կանոնները՝ ապահովելով տվյալների ամբողջականությունը, ժամանակին մուտքագրումն ու համապատասխանությունը իրական ուսումնական գործընթացին: Զեկուցողը հատուկ շեշտեց, որ մատենավարությունը պետք է կազմակերպվի օրացուցային-թեմատիկ պլաններին լիարժեք համապատասխան՝ բացառելով շեղումները և ապահովելով ուսումնական գործընթացի համակարգված ու հետևողական իրականացումը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլանները էականորեն նպաստում են պատշաճ մատենավարության կազմակերպմանը, ինչի մասին բազմիցս անդրադարձ է կատարվել նաև նախորդ քննարկումների ընթացքում: Նա ընդգծեց, որ ուսուցիչների աշխատանքը պետք է կառուցվի հենց ՕԹՊ-ների հիման վրա՝ խստորեն պահպանելով թեմատիկ հաջորդականությունը և ապահովելով ուսումնական գործընթացի տրամաբանական շարունակականությունը:

Միաժամանակ հորդորեց ազատ օրերի լրացումը էլեկտրոնային մատյանում իրականացնել «տնային աշխատանք» բաժնում՝ առաջնորդվելով ՕԹՊ-ներում միավորված թեմաներով: Նրա խոսքով՝ նման մոտեցումը կօգնի պահպանել ծրագրային համահունչությունը և խուսափել մատենավարության մեջ առաջացող անհամապատասխանություններից:

Որոշեցին՝

- Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն:
- ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում,
- տնօրենի տեղակալի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում:

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց նպատակային և բովանդակային ուղղվածությունը: Նա նշեց, որ իրականացվել են բազմաբնույթ ուսումնադաստիարակչական միջոցառումներ՝ միտված սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են դասղեկական ժամեր, թեմատիկ զրույցներ, Ապրիլի 24-ի հիշատակի օրվան նվիրված միջոցառումներ, ինչպես նաև առարկայական շաբաթներ և այլ նախաձեռնություններ՝ ապահովելով սովորողների ակտիվ ներգրավվածությունը: Կարևորվեց նաև արտադասարանական աշխատանքների իրականացումը, որոնք նպաստել են սովորողների հետաքրքրությունների զարգացմանը և ստեղծագործական կարողությունների խթանմանը:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց կարգապահության ամրապնդմանը, հաճախելիության վերահսկմանը և ծնողների հետ համագործակցության արդյունավետությանը: Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ իրականացված աշխատանքները եղել են արդյունավետ և նպաստել են ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Ռիտա Շալունցն առանձնահատուկ նշեց 4-րդ «Գ» դասարանում իրականացված «Հրդեհներ, սողանքներ, բնապահպանական անվտանգություն» թեմայով անցկացրած դաս-միջոցառման կարևորությունը: Ծնող, դպրոց, ուսուցիչ կապի շնորհիվ աշակերտները գործնականորեն տեղեկացան աղետների և դրա հետևանքների հետ: Դասը ավելի տպավորիչ դարձավ ծնող Սաթինե Բաբալարյանի ներկայացրած սահիկաշարի ցուցադրությունը և «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ՝ Արտուր Հովսեփյանի ղեկավարությամբ աղետների ժամանակ տարհնման և պաշտպանության գործնական փորձը: Դասվար Կարինե Մալխասյանը ամփոփելով կատարած աշխատանքներն անդրադարձն իրականացրեց ԳՈՒՍ մեթոդով:

Սերգեյ Ավանեսյանը ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին՝ կարևորելով ծնող-դպրոց-ուսուցիչ կապը:

Արտահայտվողները դրական գնահատեցին իրականացված աշխատանքները՝ ընդգծելով դրանց կազմակերպվածությունն ու դաստիարակչական ուղղվածությունը: Նշվեց, որ իրականացված միջոցառումները նպաստել են սովորողների համակողմանի զարգացմանը և ակտիվ մասնակցությանը:

Մասնակիցները կարևորեցին հատկապես արտադասարանական նախաձեռնությունների դերը՝ նշելով, որ դրանք նպաստում են սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Միաժամանակ ընդգծվեց կարգապահության պահպանման, հաճախելիության վերահսկման և ծնողների հետ համագործակցության շարունակականության կարևորությունը՝ որպես արդյունավետ ուսումնական գործընթացի ապահովման հիմք:

Վերջում առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ ընդլայնելով նախաձեռնությունները և կիրառելով նոր մոտեցումներ:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն ապրիլ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատել լավ:
- Շարունակել աշխատանքներն ըստ հաստատված տարեկան պլանի՝ առավել ուշադրություն դարձնելով սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը, կարգապահության ամրապնդմանը և դաստիարակչական միջոցառումների բազմազանությանը:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ դասվարների և տնօրենի տեղակալ Արաքսյա Առուստամյանի հետ քննարկման արդյունքում նախընտրելի է համարվել 2-րդ

կիսամյակի տնօրինության կողմից գրավոր աշխատանքները կազմել համակցված թեստերի տեսքով՝ ներառելով «Մայրենի», «Մաթեմատիկա» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից: Թեստերի կառուցվածքը 40/40/20 տոկոսային հարաբերակցությամբ է կազմվել: Գրավոր աշխատանքները համապատասխանացված են անցած թեմաների հետ և կազմված են թեստային աշխատանքների պահանջներին համապատասխան: Թեստերը կազմված են չորս տարբերակով: Գրավոր աշխատանքները սահմանված կարգով տրվել են և ամփոփվել են արդյունքները: Զեկուցողը հայտնեց նաև տնօրենության կողմից տրված 1-ին կիսամյակի գրավոր աշխատանքների արդյունքները, մասնավորապես կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա:

Արտահայտվեցին՝ Ն. Գալստյանը

Նունե Գալստյանը նշեց, որ անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել տարեվերջյան կրկնություններին և թեմաների ամփոփումներին, ինչը կնպաստի ավարտական գիտելիքների ստուգմանը սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:

Արաքսյա Առստամյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում նախապատրաստական աշխատանքների արդյունքում կիրառել այնպիսի մեթոդներ ու հնարներ, որ ապահովվի անկողմնակալ վերաբերմունքը: Առուստամյանը կարևոր համարեց աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքը, ինչպես նաև հիմք ընդունելով գրավոր աշխատանքների արդյունքները, դրանց հիման վրա ընթացիկ աշխատանքային պլանների մշակում՝ կրթության որակի բարելավման ուղղությամբ:

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից գրավոր աշխատանքների թեստերը (երկու տարբերակով):

Լսեցին 6. Առաջին դասարաններում գրաճանաչության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողն իր ելույթում ասաց, որ առաջին դասարանի ծրագրի համապատասխան կազմվել է թեմատիկ պլան և սահմանված ժամկետներում երեխաները յուրացրել են նախայբբենական և այբբենական շրջանը: Ավարտելով այբբենական շրջանը առաջին դասարաններում բոլոր աշակերտները տառաճանաչ են, կարողանում են կարդալ և գրել: Զեկուցողը իր ելույթում ասաց, որ ապրիլ ամսվա վերջում կատարված դիտարկումների և դասալսումների ժամանակ, ստուգելով աշակերտների տետրերը, պարզ է դարձել, որ աշակերտների մեծ մասը գրում են պահպանելով վայելչագրության կանոնները, անգամ մի քանի աշակերտ հաղթող են ճանաչվել լավագույն ձեռագրի մրցույթում:

Իհարկե կան աշակերտներ, ովքեր ունեն որոշակի բացեր, դժվարանում են հատկապես գրավոր աշխատանքներում: Առաջին դասարաններում սովորող 84 աշակերտներից միայն 1 ԿԱՊԿՈՒ աշակերտի մոտ է գրաճանաչության հետ կապված խնդիրները, մնացած աշակերտների մոտ դժվարություններ չկան՝ աշակերտները կարդում են, արտագրում են փոքրիկ տեքստեր, գրում են բառային թելադրություններ, 3-4 նախադասությունից կազմված տեքստեր:

Արտահայտվեցին՝ Գայանե Ավագյանը, Վարդ Գրիգորյանը, Արմինե Հարությունյանը

Գայանե Ավագյանն ասաց, որ 1-ին «Ա» դասարանում բոլոր աշակերտները հաղթահարել են գրաճանաչության դժվարությունները, նշեց, որ դասարանում աշխատանքները իրականացվում են հեշտությամբ: Բոլոր աշակերտները յուրացրել են ծրագրի պահանջները:

Վարդ Գրիգորյանն իր ելույթում նշեց, որ 1-ին «Բ» դասարանում բոլոր աշակերտները հաղթահարել են գրաճանաչության դժվարությունները, նշեց, որ դասարանում աշխատանքները իրականացվում են հեշտությամբ: Բոլոր աշակերտները յուրացրել են ծրագրի պահանջները:

Արմինե Հարությունյանն ասաց, որ դասարանում կա երկու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ծանր խնդրով աշակերտ, որոնք այբուբենը չեն յուրացրել, գրաճաչ չեն:

Որոշեցին՝
- Առաջին դասարաններում գրաճանաչության ստուգման մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:
- Առանձնահատուկ ուշադրություն դարձնել կրթության մեջ դժվարություններ ունեցող աշակերտներին և ուսուցչի օգնականներին ևս ընդգրկել դասապրոցեսին:

Լսեցին 7. Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ դասվար Տաթևիկ Փարսադանյանը մտադիր է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար: Նշված գործընթացի շրջանակում նախորդ ժամանակահատվածում իրականացվել է նրա մասնագիտական գործունեության շարունակական մշտադիտարկում և կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն՝ ապահովելու գնահատման օբյեկտիվությունն ու ամբողջականությունը:

Տնօրենի հրամանով ձևավորված հանձնաժողովը, ուսումնասիրելով և ամփոփելով հավաքագրված տվյալները, կազմել է կատարած աշխատանքի արդյունավետության գնահատմանն ուղղված արձանագրությունների և հիմնավոր փաստարկների ամբողջական փաթեթ: Վերջինս ենթակա է ներկայացման մանկավարժական խորհրդի նիստում, ինչպես նաև դպրոցի տնօրենին՝ համապատասխան հաստատման համար:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը:

Ռիտա Շալունցը նշեց, որ նախորդ ժամանակահատվածում իրականացվել են համապատասխան դիտարկումներ, որոնց արդյունքները պատշաճ ձևով արձանագրվել են սահմանված ձևաթղթերում: Նա հավելեց, որ այդ նյութերը պատրաստ են ներկայացման մանկավարժական խորհրդին՝ քննարկման, ինչպես նաև դպրոցի տնօրենին՝ հետագա հաստատման համար:

Որոշեցին՝ Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կողմից կատարված աշխատանքի արդյունավետության գնահատման նպատակով ձևավորված արձանագրությունների և փաստարկների փաթեթը ներկայացել մանկավարժական խորհրդի նիստում, ինչպես նաև տնօրենին՝ հաստատման (կցվում է անհատական վերահսկողության և մասնագիտական գործունեության մշտադիտարկման հանձնաժողովի անհատական վերահսկողության գործողությունների պլանի կատարողական հաշվետվությունը):

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

«29» մայիսի 2026թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին Տարրական կրթության մեթոդմիավորման բոլոր անդամները.</u>

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Աղաբեկյան Անուշ
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ՝ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տարրական կրթության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում՝ Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 1-ին դասարաններում «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումների անցկացում:
(զեկուցողներ՝ Գ. Ավագյան, Վ. Գրիգորյան, Ա. Հարությունյան)
4. 4-րդ դասարանների արտաքին գնահատման արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 4-րդ դասարաններում «Հրաժեշտ տարրական դպրոցին» միջոցառումների անցկացում:
(զեկուցողներ՝ Ն. Գալստյան, Ա. Աղաբեկյան, Կ. Մալխասյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
9. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
10. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա իրականացված աշխատանքների մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. «Տարրական կրթության մեթոդմիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 10-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 1-ին դասարաններում «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումների անցկացման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Գ. Ավագյան, Վ. Գրիգորյան, Ա. Հարությունյան)

Գայանե Ավագյանը, Վարդ Գրիգորյանը և Ա. Հարությունյանը ներկայացրին, որ 1-ին դասարաններում «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումների կազմակերպման նպատակով իրականացվել են անհրաժեշտ նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ:

Նշվեց, որ սովորողները սովորել են հայոց գրերին, Մեսրոպ Մաշտոցին, դպրությանը, գիտելիքին և հայրենիքին նվիրված բանաստեղծություններ, թեմատիկ երգեր և պարեր: Միջոցառումների ընթացքում նրանք բեմականացրել են հայոց գրերի ստեղծման պատմությանը վերաբերող դրվագներ, հանդես եկել ասմունքով, երգով, պարով և թատերական ներկայացումներով՝ ներկայացնելով մեկ տարվա ընթացքում ձեռք բերած գիտելիքները, ընթերցանության, գրելու և հաղորդակցման հմտությունները:

Զեկուցողներից յուրաքանչյուրը մանրամասն ներկայացրեց իր դասարանում կազմակերպված միջոցառման ընթացքը՝ ընդգծելով սովորողների ակտիվ մասնակցությունը, ստեղծագործական մոտեցումները և ծնողների ներգրավվածությունը: Նշվեց, որ «Հրաժեշտ Այբբենարանին» հանդիսությունները դարձել են առաջին դասարանցիների դպրոցական կյանքի կարևոր և հիշարժան իրադարձություններից մեկը՝ արժևորելով նրանց առաջին ուսումնական տարվա ձեռքբերումներն ու հաջողությունները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ռ. Շալունցը

Արտահայտվողները փաստեցին, որ «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումները կազմակերպվել և անցկացվել են բարձր մակարդակով: Նշվեց, որ սովորողների ելույթները եղել են մանրակրկիտ նախապատրաստված, բովանդակալից և գեղարվեստորեն հղկված: Յուրաքանչյուր դասարան հանդես է եկել իր ինքնատիպ ծրագրով՝ ներկայացնելով երգեր, պարեր, ասմունք, բեմականացումներ և այլ ստեղծագործական համարներ:

Ընդգծվեց, որ առաջին դասարանցիներն իրենց վստահ ու անկաշկանդ ելույթներով ներկայացրել են մեկ տարվա ընթացքում ձեռք բերած գիտելիքները, ընթերցանության, գրելու և խոսքի զարգացման հմտությունները՝ հիացնելով ներկա հյուրերին, ծնողներին, մանկավարժներին և դպրոցի ղեկավարությանը: Միջոցառումները անցել են ջերմ, տոնական և հանդիսավոր մթնոլորտում՝ արժանանալով բարձր գնահատանքի և դառնալով սովորողների դպրոցական կյանքի հիշարժան իրադարձություններից մեկը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 1-ին դասարաններում «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումների անցկացման մասին զեկուցումը:

Լսեցին 4. 4-րդ դասարաններում «Հրաժեշտ տարրական դպրոցին» միջոցառումների անցկացման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ն. Գալստյան, Ա. Աղաբեկյան, Կ. Մալխասյան)

Նունե Գալստյանը, Անուշ Աղաբեկյանը և Կարինե Մալխասյանը ներկայացրին, որ 4-րդ դասարաններում «Հրաժեշտ տարրական դպրոցին» միջոցառումների կազմակերպման նպատակով նախապես իրականացվել են անհրաժեշտ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ:

Նշվեց, որ սովորողները սովորել են հայոց գրերին, Մեսրոպ Մաշտոցին, դպրությանը, գիտելիքին և հայրենիքին նվիրված բանաստեղծություններ, թեմատիկ երգեր և պարեր: Միջոցառումների ընթացքում նրանք բեմականացրել են հայոց գրերի ստեղծման պատմությանը վերաբերող դրվագներ, ինչպես նաև երգի, պարի, ասմունքի և գեղարվեստական ներկայացումների միջոցով ամփոփել ու ներկայացրել տարրական դպրոցում ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Զեկուցողներից յուրաքանչյուրը մանրամասն ներկայացրեց իր դասարանում կազմակերպված միջոցառման ընթացքը, ընդգծեց սովորողների ակտիվ մասնակցությունը, ստեղծագործական մոտեցումները և միջոցառումների կրթադաստիարակչական նշանակությունը՝ նշելով, որ դրանք հանդիսավոր և ջերմ մթնոլորտում ամփոփեցին տարրական կրթության կարևոր փուլը և դարձան հիշարժան իրադարձություն ինչպես սովորողների, այնպես էլ ծնողների և մանկավարժների համար:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ռ. Շալունցը

Արտահայտվողները փաստեցին, որ «Հրաժեշտ տարրական դպրոցին» միջոցառումները կազմակերպվել և անցկացվել են բարձր մակարդակով: Նշվեց, որ սովորողների ելույթները եղել են նախապես մանրակրկիտ պատրաստված, բովանդակալից և գեղարվեստորեն հղկված: Յուրաքանչյուր դասարան հանդես է եկել իր ինքնատիպ և ստեղծագործ ծրագրով՝ ներկայացնելով երգեր, պարեր, ասմունք, բեմականացումներ և այլ գեղարվեստական համարներ:

Ընդգծվեց, որ միջոցառումները տոնական և ջերմ մթնոլորտում հիացրել են ներկա ծնողներին, հյուրերին, մանկավարժներին և դպրոցի ղեկավարությանը՝ արժանանալով բարձր գնահատանքի: Միաժամանակ նշվեց, որ նման միջոցառումները կարևոր դեր ունեն սովորողների ստեղծագործական ունակությունների բացահայտման, ինքնադրսևորման, ազգային և մշակութային արժեքների պահպանման, ինչպես նաև դպրոց–ընտանիք համագործակցության ամրապնդման գործում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 4-րդ դասարաններում «Հրաժեշտ տարրական դպրոցին» միջոցառումների անցկացման մասին զեկուցումը:

Լսեցին 5. 4-րդ դասարանների արտաքին գնահատման արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա 4-րդ դասարանների արտաքին գնահատման արդյունքների ամփոփ նկարագիրը:

Նշվեց, որ 2026 թվականի մայիսի 20-ին Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում առաջին անգամ իրականացվել է 4-րդ դասարանների սովորողների արտաքին գնահատում՝ համաձայն Հանրակրթության պետական նոր չափորոշչի: Գնահատումն անցկացվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) մշակած միասնական թեստի միջոցով, որն ընդգրկել է «Մայրենի» (40%), «Մաթեմատիկա» (40%) և «Ես և շրջակա աշխարհը» (20%) առարկաները:

Արտաքին գնահատումն իրականացվել է 4-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարաններում: Գնահատմանը մասնակցել են տվյալ դասարանների բոլոր սովորողները, այդ

թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒԻ) երկու սովորող՝ նրանց համար սահմանված համապատասխան պայմանների ապահովմամբ։

Զեկուցողը նշեց, որ գիտելիքների ստուգման ընթացքին հետևել են դպրոցի տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը և ԳԹԿ ներկայացուցիչ Սոնա Կարախանյանը։ Վերջինս բարձր է գնահատել դպրոցի կողմից իրականացված կազմակերպչական աշխատանքները, գնահատման գործընթացի պատշաճ կազմակերպումն ու սահմանված կարգի պահպանումը։

Անդրադառնալով արդյունքներին՝ զեկուցողը փաստեց, որ արտաքին գնահատման արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են և արտացոլում են սովորողների կողմից տարրական կրթության ծրագրի հիմնական վերջնարդյունքների բավարար յուրացումը։

Միաժամանակ ընդգծվեց, որ արտաքին գնահատման արդյունքները որևէ ազդեցություն չեն ունենալու սովորողների հաջորդ դասարան փոխադրման գործընթացի վրա։ 2025–2026 ուսումնական տարվա ավարտին 4-րդ դասարանի սովորողները Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ինքնաշխատ եղանակով կհամարվեն ատեստավորված՝ տարեկան բնութագրերի հիման վրա։

Զեկուցողը հավելեց, որ արտաքին գնահատման ներդրման հիմնական նպատակը տարրական կրթության որակի գնահատումն է, կրթական ձեռքբերումների և առկա խնդիրների բացահայտումը, ինչպես նաև հետագա ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված քայլերի պլանավորումը՝ Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներին համապատասխան։

Արտահայտվեցին՝ Ն. Գալստյանը, Ա. Աղաբեկյանը, Կ. Մալխասյանը

Արտահայտվողները ներկայացրին իրենց դասարանների արտաքին գնահատման արդյունքները՝ անդրադառնալով ինչպես սովորողների ձեռքբերումներին, այնպես էլ գնահատման ընթացքում արձանագրված դժվարություններին։

Կարինե Մալխասյանը նշեց, որ արտաքին գնահատման թեստերը բովանդակային առումով բավականին ընդգրկուն և պահանջկոտ էին։ Նրա խոսքով՝ ժամանակի սահմանափակ լինելու պատճառով սովորողների մի մասի մոտ նկատվել է հուզմունք, ինչը որոշ դեպքերում ազդել է առաջադրանքների կատարման ընթացքի վրա։ Այնուամենայնիվ, բոլոր սովորողները ցուցաբերել են իրենց կարողություններին և ուսումնառության ընթացքում ձևավորված բնութագրիչներին համապատասխան արդյունքներ։

Նունե Գալստյանն ընդգծեց արտաքին գնահատման արդյունքների վերլուծության կարևորությունը՝ նշելով, որ անհրաժեշտ է մանրամասն արձանագրել ինչպես սովորողների հաջողությունները, այնպես էլ առկա բացթողումները։ Նրա կարծիքով, արդյունքների քննարկումը հնարավորություն է տալիս բացահայտել այն ուղղությունները, որոնք պահանջում են լրացուցիչ ուշադրություն և նպատակային աշխատանք։

Արտահայտվողները փաստեցին, որ 2025–2026 ուսումնական տարվա արտաքին գնահատումն ընդհանուր առմամբ կազմակերպվել և անցկացվել է բարձր մակարդակով՝ պահպանելով սահմանված ընթացակարգերը։ Միաժամանակ նշվեց, որ գնահատման արդյունքների հիման վրա անհրաժեշտ է պլանավորել համապատասխան միջոցառումներ՝ սովորողների պատրաստվածության մակարդակի բարձրացման, առկա բացթողումների հաղթահարման և Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներին համապատասխան կրթության որակի շարունակական բարելավման նպատակով։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 4-րդ դասարանների արտաքին գնահատման արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում երկարօրյա ուսուցման խմբակ է կազմակերպվել 2-4-րդ դասարանների աշակերտի համար: Երկարօրյա ուսուցման խմբակներում աշակերտների ընդգրկման համար հիմք են հանդիսացել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, որտեղ սահմանված է, որ 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններից ընդգրկվում են այն աշակերտները, որոնք ունեցել են առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ: Զեկուցողը հավելեց, որ իր կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ և իրականացված աշխատանքները գոհացուցիչ են:

Զեկուցողը նաև ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի փետրվար-մայիս ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների մասին, դասապրոցեսի պատշաճ կազմակերպման, անցկացման և արդյունքների մասին ինֆորմացիա: Կարևորվեց նաև երկարօրյա ուսուցման խմբակ ունեցող ուսուցիչների կողմից ներկայացված հաշվետվությունները, որոնց միջոցով ամփոփվեցին նաև 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներն ու արձանագրված արդյունքները:

Ներկայացվեց, որ ուսումնական տարվա ավարտին ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվել է երկարօրյա խմբակի կազմակերպման և իրականացման գործընթացի վերահսկողություն, ուսումնասիրվել են կիրառվող փաստաթղթերը, հրամանները: Արդյունքները գոհացուցիչ էին, իրականացված աշխատանքները՝ ըստ չափորոշչային պահանջների:

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, անդրադարձան իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին, ձեռքբերումներին ու արդյունքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է 2025-2026 ուսումնական տարվա երկարօրյա ուսուցման կազմակերպման աշակերտների անվանացանկը (հոկտեմբեր-մայիս)):

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված էլեկտրոնային մատենավարության հետ կապված բացթողումների ու թերությունների մասին: Նշեց, որ որոշ ուսուցիչների մոտ նշանակված մի շարք գնահատականներ չեն պահպանվել՝ տեխնիկական խնդիրների պատճառով: Ամփոփելով 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված մատենավարության ստուգման աշխատանքները ՄՄ նախագահ Ռիտա Շալունցը նշեց, որ այս հարցում ուսուցիչների մոտ ավելի քիչ թերություններ են արձանագրվել, քան նախորդ տարիներին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը կարևորվեց յուրաքանչյուր ուսուցչի անհատական և պատասխանատու վերաբերմունքի անհրաժեշտությունը մատենավարության գործում: Նշեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրվում են թերություններ, հավելելով, որ պետք է վերահսկել ուսուցիչների կողմից

կատարվող ամենօրյա աշխատանքները և մատենավարության հետ կապված խնդիրները վեր հանել, քննարկել, ժամանակին կատարել ուղղումներ: Արտահայտվողը շեշտեց, որ ի համեմատ նախորդ ուսումնական տարիների, 2025-2026 ուսումնական տարում մատենավարության հետ կապված բացթողումները չնչին են:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) կազմման, իրականացման և համապատասխան դիտարկման թերթիկների լրացման գործընթացի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Նշվեց, որ ԱՈՒՊ-ների մշակման և դիտարկման աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են գործող իրավական ակտերի, սահմանված կարգի և մեթոդական պահանջների համաձայն՝ ապահովելով անհրաժեշտ փաստաթղթերի ժամանակին, ճշգրիտ և ամբողջական լրացումը: Աշխատանքներն իրականացվել են դասավանդող ուսուցիչների, ուսուցչի օգնականների, դպրոցի ներառական կրթության մասնագետների և ծնողների համագործակցությամբ:

Զեկուցողը շեշտեց, որ յուրաքանչյուր սովորողի համար ԱՈՒՊ-ները կազմվել են՝ հաշվի առնելով նրա անհատական կրթական կարիքները, կարողությունները, զարգացման առանձնահատկությունները, ուսումնական առաջադիմությունն ու սահմանված կրթական նպատակները: Պարբերաբար իրականացվել են սովորողների առաջընթացի դիտարկումներ, լրացվել են համապատասխան դիտարկման թերթիկները, արձանագրվել են ձեռքբերումներն ու առկա դժվարությունները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կատարվել են համապատասխան փոփոխություններ և ճշգրտումներ անհատական ուսուցման պլաններում:

Նշվեց նաև, որ իրականացված համակարգված աշխատանքները նպաստել են ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը, նրանց կրթական առաջընթացի շարունակական գնահատմանը և անհատական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը՝ ապահովելով ներառական կրթության սկզբունքների լիարժեք իրականացումը դպրոցում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների կազմումն օգնում է ավելի մանրակրկիտ հասկանալ յուրաքանչյուր աշակերտի կարիքներն ու առանձնահատկությունները և ուսուցումն ավելի արդյունավետ համապատասխանեցնել նրանց կարողություններին: Կարևորվեց, որ այս գործընթացը չպետք է լինի պարզապես ձևական, այլ իրականում ծառայի աշակերտներին աջակցելու ու կրթության որակը բարելավելու նպատակին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը:

Լսեցին 9. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների վերլուծությունը: Նա նշեց, որ աշխատանքները

տրվել են սահմանված ժամանակացույցով՝ պարզելու աշակերտների ընթացիկ պատրաստվածությունը և չափորոշչային պահանջների կատարումը: Տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տրվել են «Մայրենի», «Մաթեմատիկա» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից: Ռիտա Շալունցը նշեց արդյունքների քննարկման անհրաժեշտության ու վերլուծության կարևորություն մասին, կարևորեց աշակերտների կողմից ինքնուրույն աշխատելու փորձը և ուսուցիչների կողմից գրավորների ստուգման մեթոդները, քանի որ անկողմնակալ մոտեցումը թույլ է տալիս պարզել եղած դժվարություններն ու խնդիրները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Կ. Պողոսյանը, Ա. Դալունցը:

Արտահայտվողներն անհրաժեշտ համարեցին՝ «Մայրենի», «Մաթեմատիկա» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաների իմացության մակարդակի բարձրացման հարցում կիրառել այնպիսի հնարներ ու մեթոդներ, որոնք միտված կլինեն ոչ միայն դասի արդյունավետության բարձրացմանը, այլ նաև աշակերտների ինքնուրույն և առանց աջակցության աշխատելու կարողությունների զարգացմանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է աշխատանքները կազմակերպել ամբողջ տարվա ընթացքում և կարևորեց տարբեր տեսակի գրավոր աշխատանքների միջոցով ուղղագրության, կետադրության և լեզվական հմտությունների սովորեցումն ու թեստերի հետ աշխատանքներ իրականացնելու հմտությունների զարգացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 10. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) մայիս ամսվա իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈւԴԱՏՊ) մայիս ամսվա համար նախատեսված և իրականացված աշխատանքների հաշվետվությունը: Նշվեց, որ մայիս ամսվա ընթացքում հաջողությամբ ավարտվել, ստուգվել և ամփոփվել են նախատեսված բոլոր աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում հումանիտար առարկաների մասնախմբի կողմից կազմակերպվել են հետևյալ աշխատանքները.

1.Վերահսկվել է ուսումնական ծրագրերի կատարողականը;

2.Կազմակերպվել և անցկացվել են տնօրենության գրավոր աշխատանքներ, ամփոփիչ աշխատանքներ:

3.Իրականացվել է դասալսումների և դասերի դիտարկումների գործընթացը:

4.Ուշադրություն է դարձվել սովորողների առաջադիմության և հաճախումների վերահսկմանը:

5.Ամփոփվել են ավարտական և փոխադրական քննությունների նախապատրաստական աշխատանքները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները բարձր գնահատեցին կատարված աշխատանքները և ընդգծեցին, որ օրակարգում ներառված բոլոր միջոցառումների, հանձնարարականների և որոշումների իրականացումը միտված է ուսումնական և դաստիարակչական գործընթացների առավել արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի շարունակական բարելավմանը և դպրոցի զարգացման ռազմավարական նպատակների իրականացմանը:

Նրանք նշեցին, որ կատարված աշխատանքները նպաստում են սովորողների կրթական կարիքների առավել արդյունավետ բավարարմանը, ուսուցիչների մասնագիտական գործունեության կատարելագործմանը, ինչպես նաև

կրթական միջավայրի բարելավմանն ու զարգացմանը: Արտահայտվողները կարևորեցին նման հետևողական և նպատակային աշխատանքների շարունակական իրականացումը՝ համոզմունք հայտնելով, որ դրանք դրական ազդեցություն կունենան ուսումնական գործընթացի արդյունավետության, սովորողների առաջադիմության և դպրոցի ընդհանուր գործունեության արդյունքների վրա:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն՝ 2025-2026 ուսումնական տարվա մայիս ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարողականը:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

«26» հունիսի 2026թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին Տարրական կրթության մեթոդմիավորման բոլոր անդամները.</u>

1. Շալունց Ռիտա (ՄՄ նախագահ)
2. Ավագյան Գայանե
3. Գրիգորյան Վարդ
4. Հարությունյան Արմինե
5. Ջավահիրյան Իրինա
6. Աղաբեկյան Անահիտ
7. Փարսադանյան Տաթևիկ
8. Դոլունց Արուս
9. Պողոսյա Կարինե
10. Գալստյան Նունե
11. Աղաբեկյան Անուշ
12. Մալխասյան Կարինե

Նիստին ներկա էր տնօրեն՝ Մերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ՝ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական՝ Արփինե Ծատրյանը, տարրական կրթության խմբակների ղեկավարներ, տնօրենի տեղակալ՝ Արաքսյա Առստամյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տարրական կրթության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում՝ Տարրական կրթության մեթոդմիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Հանրակրթության ոլորտում ընդունված իրավական նոր կարգավորումները և փոփոխությունները:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ ՄՄ անդամներ)
7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն դպրոցի տնօրենին:
(զեկուցողներ՝ Ռ. Շալունց)
9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
10. 2026-2027 ուսումնական տարում գնահատման կարգի փոփոխության քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Լսեցին 1. Տարրական կրթության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Տարրական կրթության մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական կրթության մեթոդական միավորման նախորդ նիստի օրակարգային հարցերի կատարման ընթացքը՝ անդրադառնալով ընդունված որոշումների և հանձնարարականների իրականացման արդյունքներին:

Նշվեց, որ նախորդ նիստում ընդունված որոշումները կատարվել են ամբողջությամբ և սահմանված ժամկետներում: Իրականացվել են նախատեսված ուսումնամեթոդական, կազմակերպչական և վերահսկողական աշխատանքները, որոնց շրջանակում ապահովվել է ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպումը, դասավանդման որակի բարելավմանը միտված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև սովորողների կրթական առաջընթացի շարունակական մշտադիտարկումը:

Զեկուցողը նաև ամփոփեց նախորդ նիստից հետո կատարված աշխատանքների արդյունքները՝ ընդգծելով, որ մեթոդական միավորման անդամները պատասխանատվությամբ են իրականացրել իրենց ստանձնած հանձնարարությունները և ակտիվորեն մասնակցել մեթոդական ու կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը: Արձանագրվեց, որ նախորդ նիստի որոշումների կատարողականը գնահատվում է բավարար, իսկ իրականացված աշխատանքները նպաստել են մեթոդական միավորման գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Տարրական կրթության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 8. Հանրակրթության ոլորտում ընդունված իրավական նոր կարգավորումների և փոփոխությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների հիմնական ուղղությունները՝ անդրադառնալով հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, գործող իրավական կարգավորումներին և Հանրակրթության պետական նոր չափորոշչի (ՀՊՉ) պահանջներին:

Նշվեց, որ նոր ուսումնական տարվա կազմակերպման գործընթացում անհրաժեշտ է առաջնորդվել հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերով՝ ապահովելով ուսումնական գործընթացի արդյունավետ պլանավորում, շարունակականություն և կրթության որակի բարձրացմանն ուղղված նպատակային աշխատանքներ: Կարևորվեց, որ յուրաքանչյուր մանկավարժ պետք է նախապես ծանոթանա նոր կարգավորումներին և իր գործունեությունը համապատասխանեցնի սահմանված պահանջներին:

Զեկուցողը ներկայացրեց ՀՊՉ-ի շրջանակում նախատեսված հիմնական փոփոխությունները՝ ընդգծելով ուսումնական բնագավառների փոխկապակցվածությունը, միջառարկայական կապերի ամրապնդման կարևորությունը և սովորողների կարողունակությունների ձևավորմանն ուղղված մոտեցումները: Շեշտվեց, որ ուսումնական պլանների, թեմատիկ

պլանավորումների, դասերի կազմակերպման և գնահատման գործընթացներում անհրաժեշտ է պահպանել չափորոշչային պահանջները՝ հավասարակշռված կերպով զարգացնելով սովորողների գիտելիքները, գործնական հմտությունները, արժեքային համակարգն ու կարողությունները։

Անդրադարձ կատարվեց նաև 2026 թվականի ընթացքում հանրակրթության ոլորտում ընդունված իրավական նոր կարգավորումներին, ՀՀ կառավարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համապատասխան որոշումներին ու հրամաններին։ Նշվեց, որ փոփոխությունները վերաբերում են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, գնահատման համակարգին, մանկավարժական գործունեությանը, ներառական կրթության իրականացմանը, կրթական միջավայրի անվտանգության ապահովմանը և կառավարման գործընթացներին։

Զեկուցողը կարևորեց հատկապես դպրոցական անվտանգ միջավայրի ապահովման նոր պահանջների հետևողական իրականացումը։ Նշվեց, որ դպրոցի յուրաքանչյուր աշխատակից պետք է լիարժեք իրազեկ լինի սահմանված չափանիշներին, պատասխանատվությամբ իրականացնի իր պարտականությունները և նպաստի սովորողների համար անվտանգ, պաշտպանված ու բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը։

Ընդգծվեց նաև, որ մինչև 2026–2027 ուսումնական տարվա մեկնարկը մանկավարժները պետք է վերանայեն իրենց ուսումնամեթոդական նյութերը, թեմատիկ պլանները, դասավանդման մեթոդներն ու գնահատման գործիքները՝ դրանք համապատասխանեցնելով նոր պահանջներին և սովորողների կրթական կարիքներին։

Զեկուցողը շեշտադրեց ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացման, մեթոդական միավորումների արդյունավետ աշխատանքի, փոխադարձ դասալսումների, փորձի փոխանակման և համագործակցային գործունեության կարևորությունը։ Նշվեց, որ կրթական բարեփոխումների հաջող իրականացումը հնարավոր է միայն միասնական, հետևողական և համակարգված աշխատանքի միջոցով։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետ և հետևողական ներդրման անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ նոր իրավական կարգավորումներն ու ընդունված ակտերը նպատակաուղղված են կրթության որակի բարձրացմանը, սովորողակենտրոն ուսուցման ապահովմանը և կրթական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը։

Նրանք նշեցին, որ Հանրակրթության պետական նոր չափորոշչի (ՀՊՉ) պահանջների լիարժեք իրականացումը ենթադրում է մանկավարժների շարունակական մասնագիտական զարգացում, ինքնակրթության խթանում, վերապատրաստման ծրագրերի ակտիվ մասնակցություն, ինչպես նաև մեթոդական միավորումների շրջանակում արդյունավետ համագործակցության և մասնագիտական փորձի փոխանակման ապահովում։

Արտահայտվողներն առանձնահատուկ կարևորեցին ուսումնական բնագավառների միջև միջառարկայական կապերի ամրապնդումը, կարողունակահեն ուսուցման սկզբունքների կիրառումը, սովորողների անհատական առանձնահատկություններին համապատասխան ուսուցման կազմակերպումը, ժամանակակից գնահատման գործիքների արդյունավետ օգտագործումը և կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառումը։

Քննարկումների ընթացքում անդրադարձ կատարվեց նաև հանրակրթական հաստատություններում անվտանգ և ներառական կրթական միջավայրի ապահովման նոր պահանջներին։ Նշվեց, որ յուրաքանչյուր մանկավարժ պետք է իր մասնագիտական գործունեությունը կազմակերպի սահմանված

չափանիշներին համապատասխան՝ նպաստելով սովորողների ֆիզիկական և հոգեբանական անվտանգության պահպանմանը, փոխադարձ հարգանքի և համագործակցության մթնոլորտի ձևավորմանը։

Արտահայտվողները համոզմունք հայտնեցին, որ իրավական փոփոխությունների, չափորոշչային պահանջների և կրթական նոր մոտեցումների հետևողական կիրառումը հնարավորություն կտա ապահովել կրթության որակի շարունակական բարելավում, բարձրացնել ուսուցման արդյունավետությունը և նպաստել 2026–2027 ուսումնական տարվա նպատակային ու կազմակերպված իրականացմանը։

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն 2026–2027 ուսումնական տարվա նախապատրաստման վերաբերյալ ներկայացված զեկույցը։
2. Ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպումը Հանրակրթության պետական նոր չափորոշչի, գործող ուսումնական պլանների և հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան։
3. Հանձնարարել մանկավարժներին վերանայել և անհրաժեշտության դեպքում համապատասխանեցնել թեմատիկ պլանները, գնահատման ձևերն ու դասավանդման մեթոդները գործող իրավական կարգավորումներին և Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներին։
4. Ուժեղացնել աշխատանքները հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության նոր չափանիշների ներդրման, ներքին կարգապահական պահանջների պահպանման և անվտանգ կրթական միջավայրի ապահովման ուղղությամբ։
5. Խթանել մանկավարժների մասնագիտական շարունակական զարգացումը, փորձի փոխանակումը և մեթոդական համագործակցությունը՝ կրթական բարեփոխումների արդյունավետ իրականացման նպատակով։

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում Տարրական կրթության մեթոդմիավորման ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի, բաց դաս-միջոցառումների ամփոփ կատարողականը։ Նշեց, որ կազմակերպված դասերն ու միջոցառումները ուսուցանող էին, երեխաները յուրաքանչյուր միջոցառման ընթացքում ի ցույց էին դնում իրենց գիտելիքները, արտասանական ունակությունները և գիտելիքները։

Զեկուցողը ներկայացրեց միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականը՝ ասելով, որ կան դասվարներ, ովքեր տարեսկզբին ներկայացրած դաս-միջոցառումներից շատ են կազմակերպել։ Սակայն կան նաև դասվարներ, ովքեր չեն իրականացրել որևէ միջոցառում, անգամ նախապես առաջադրածը չեն իրականացրել։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ցուցադրական դասերը պետք է լինեն ծրագրավորված, ուսուցիչը պետք է հաշվի առնի դասի ընթացքի հնարավոր տարբերակները, բայց ոչ երբեք նույն դասը արդեն նախապես անցկացրած լինի և դա բազում փորձերի վրա հիմնված դաս-շոուի վերածվի։ Նշեց, որ պետք է հետևել հաստատված նվազագույն պահանջներին և համապատասխան այդ ցանկի ապահովել բաց դասերի, դաս միջոցառումների կատարողականը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Արմիդա Գևորգյանը բարձր գնահատեց 2025-2026 ուսումնական տարում իրականացված արտադասարանական խմբակների գործունեության կարևորությունը՝ ընդգծելով, որ նման ձևաչափով ուսումնական նախաձեռնությունները խթանում են աշակերտների հետաքրքրությունները, զարգացնում հմտությունները և աջակցում նրանց անհատական առաջընթացին։ Միաժամանակ, Գևորգյանը մտահոգությամբ նշեց, որ ուսումնական տարվա ընթացքում արձանագրվել են որոշակի բացթողումներ. մասնավորապես՝ որոշ խմբավարներ չեն կազմակերպել խմբակային աշխատանքը սահմանված ժամանակացույցին համապատասխան, ինչը կապված է եղել դպրոցում իրականացվող հիմնանորոգման աշխատանքների, երկհերթ դասապրոցեսի հետ։

Նա անդրադարձավ նաև խմբակային աշխատանքների մատենավարության որակին՝ նշելով, որ ինչպես ընթացիկ, այնպես էլ ամփոփիչ փուլերում գրանցվել են թերություններ փաստաթղթավորման և նյութերի վարման մեջ։ Այս հանգամանքը, ըստ Գևորգյանի, անհրաժեշտ է ապագայում կանխարգելել՝ խմբավարների հետևողական աշխատանքի, ընթացիկ հսկողության և մեթոդական աջակցման միջոցով։

Բոլոր խմբավարները ներկայացրին իրենց կողմից 2025-2026 ուսումնական տարում իրականացված աշխատանքների ամփոփ հաշվետվությունները՝ առանձնացնելով հիմնական ձեռքբերումները, խնդիրներն ու առաջարկվող լուծումները։

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը

Ռիտա Շալունցը կարևորեց խմբակների գործունեության արդյունքները, ինչպես նաև շեշտեց, որ անհրաժեշտ է վերլուծել խմբակների գործունեությունը, դուրս բերել խնդիրները և հաջորդ ուսումնական տարիներին աշխատել այնպես, որ այդ խնդիրներն այլևս չկրկնվեն։ Շալունցն անդրադարձավ Գևորգյանի կողմից ուսումնական տարվա ընթացքում իրականացված դիտարկումներին, որոնք իրականացվել են խմբակների դասերի ընթացքում։ Շեշտեց, որ հիմնականում արդյունքները գոհացուցիչ են։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ ՄՄ նախագահ, անդամներ)

Մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունցը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված գործունեությունը՝ ընդգծելով թե՛ ձեռքբերումները, թե՛ արձանագրված բացթողումները։ Մասնավորապես անդրադարձ կատարվեց ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացված և չիրականացված աշխատանքներին՝ վերլուծելով դրանց պատճառներն ու հնարավոր լուծումները։

Մեթոդմիավորման անդամները հերթով ներկայացրեցին իրենց հաշվետվությունները՝ ընդգծելով տարվա ընթացքում իրականացված միջոցառումները, իրականացրած ուսումնական, դաստիարակչական և

մեթոդական աշխատանքների բովանդակությունը: Նրանք ամփոփեցին արդյունքները, վերլուծեցին առկա խնդիրները, ինչպես նաև ներկայացրեցին վերափոխման և զարգացման ուղղությամբ առաջարկներ:
Քննարկումների առանցքում էին նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքները: Ուսուցիչները մասնավորապես նշեցին, որ 2025-2026 ուսումնական տարում կիրառվել են դիտարկման թերթիկներ, որոնք հնարավորություն են տվել առավել արդյունավետ և անհատականացված մոտեցում ցուցաբերել սովորողների առաջընթացի վերլուծության և ուղորդման գործում: Այս գործելակերպը գնահատվեց դրական և նպատակահարմար՝ հետագա աշխատանքի պլանավորման տեսանկյունից:

Արտահայտվեցին՝ Գ. Ավագյանը, Ա. Աղաբեկյանը, Ի. Ջավահիրյանը

Արտահայտվողները կարևորեցին մեթոդմիավորման նիստում ծավալված բովանդակալից քննարկումները և ներկայացված հաշվետվությունների վերլուծությունը՝ ընդգծելով նման ձևաչափի հանդիպումների դերը փորձի փոխանակման, համագործակցության խորացման և աշխատանքի շարունակական բարելավման գործում:
Մասնավորապես արժևորվեց ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով հաշվառված աշակերտների հետ տարվող աշխատանքների վերլուծությունը՝ ընդգծելով ուսուցիչների, ուսուցչի օգնականների և դպրոցի մյուս մասնագետների միջև ձևավորված արդյունավետ համագործակցությունը:
Քննարկման ընթացքում ներկայացվեցին նաև տարվա ընթացքում առաջացած որոշ խնդիրներ, որոնք կապված էին ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսումնական առաջադիմության, վարքային դրսևորումների և անհատական աշխատանքի կազմակերպման հետ: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց Սերգեյ Ավանեսյանի կողմից մշակված դիտարկման թերթիկների կիրառման փորձին, որը ներկայացվեց որպես արդյունավետ գործիք աշակերտների ուսումնական և սոցիալական առաջընթացի հետևման, վերլուծության և անհատական աջակցության պլանավորման համար:
Ամփոփելով՝ ներկաները կարևորեցին ինչպես իրականացված աշխատանքների արձանագրումը, այնպես էլ շարունակական վերանայման, վերաիմաստավորման և զարգացման անհրաժեշտությունը՝ ելնելով աշակերտների կարիքներից և կրթական ընթացքի դինամիկայից:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները՝ հատուկ ընդգծելով, որ դրանք հանդիսացել են արդյունավետ մեթոդական գործիք՝ ուսուցման որակի մշտադիտարկման, դասավանդման հմտությունների գնահատման և վերանայման համար: Քննարկման ընթացքում շեշտվեց, որ արձանագրությունների վերլուծությունն օգնել է լուսաբանել ինչպես ուժեղ կողմերը, այնպես էլ բարելավման ենթակա ոլորտները՝ նպաստելով մասնագիտական աճին:
Նա առանձնացրեց նաև հաջողված դասերը՝ նշելով, որ դրանք լավագույնս արտացոլում էին դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառում, աշակերտակենտրոն մոտեցում և արդյունավետ հետադարձ կապ:
Հատուկ կարևորում ստացավ նաև դասալսումներին տնօրեն Սերգեյ Ավանեսյանի, մեթոդմիավորման անդամ ուսուցիչների, ինչպես նաև տարբեր մեթոդմիավորումների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը: Նրանց ներգրավվածությունը ապահովել է դիտարկման բազմակողմանիությունը,

խթանել մասնագիտական երկխոսությունն ու խորքային վերլուծությունը: Արդյունքում ձևավորված քննարկումները նպաստել են ուսումնական գործընթացի վերաիմաստավորմանը, նոր գաղափարների առաջքաշմանը և միասնական մոտեցումների ձևավորմանը:

Արտահայտվեցին՝ Ա. Աղաբեկյանը

Անուշ Աղաբեկյանը նշեց, որ դասալսումներն ու դրանց հաջորդող կազմակերպված քննարկումները էական դեր են խաղում դասավանդման արդյունավետության բարձրացման գործում: Դրանք նպաստում են ոչ միայն թերությունների ժամանակին բացահայտմանն ու շտկմանը, այլև ապահովում են միջմասնագիտական փորձի փոխանակում, որը խթանում է ուսուցիչների մասնագիտական աճը:

Նրա խոսքով՝ նման դիտարկումներն ու վերլուծությունները հնարավորություն են տալիս վերանայել դասի կառուցվածքը, գործածվող մեթոդները և աշակերտների ներգրավվածության մակարդակը՝ այդպիսով նպաստելով դասերի որակի շարունակական բարելավմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 8. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման և տնօրենին առաջարկություն ներկայացնելու մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ռ. Շալունց)

Զեկուցող Ռիտա Շալունցը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխման նախագիծը՝ նշելով, որ այն մշակվել է դպրոցի ուսումնական պլանի, դասարանների կազմավորման, առարկայական ժամաքանակների, մանկավարժների մասնագիտական համապատասխանության և գործող իրավական պահանջների հիման վրա:

Նշվեց, որ դասաժամերի բաշխման նախագիծը կազմվել է՝ հաշվի առնելով ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրության համապատասխան դրույթները, մասնավորապես՝ դպրոցի կանոնադրության 87-րդ կետի 10-րդ ենթակետի և հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրության օրինակելի ձևում կատարված փոփոխությունների 93-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոնց համաձայն՝ մանկավարժական խորհուրդը քննարկում է դասաբաշխման նախագիծը և ներկայացնում առաջարկություններ մինչև դրա վերջնական հաստատումը:

Զեկուցողը ընդգծեց, որ դասաժամերի նախնական բաշխման ընթացքում պահպանվել են արդարության, թափանցիկության, մանկավարժական նպատակահարմարության և արդյունավետության սկզբունքները: Հաշվի են առնվել ուսուցիչների մասնագիտական որակավորումը, աշխատանքային փորձը, ուսումնական ծանրաբեռնվածության համաչափ բաշխումը և կրթական գործընթացի անխափան կազմակերպման անհրաժեշտությունը:

Նշվեց, որ ներկայացված նախագիծը նախնական բնույթ է կրում և կարող է փոփոխվել՝ պայմանավորված 2026–2027 ուսումնական տարվա ուսումնական պլանների վերջնական հաստատմամբ, դասարանների համալրմամբ, մանկավարժական կազմի փոփոխություններով և հանրակրթության ոլորտում ընդունված նոր իրավական կարգավորումներով:

Անդրադարձ կատարվեց նաև Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման հաջորդ փուլին՝ նշելով, որ 2026–2027 ուսումնական տարում 1–4-րդ դասարանների ուսումնական պլաններում կարող են նախատեսվել փոփոխություններ՝ կապված առանձին առարկաների ժամաքանակների և բովանդակային պահանջների հետ: Այդ պատճառով առաջարկվեց դասաժամերի վերջնական բաշխումը լրացուցիչ քննարկել մանկավարժական

խորհրդի օգոստոսյան նիստում՝ անհրաժեշտ իրավական և կազմակերպչական հիմքերի հստակեցումից հետո։

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ ներկայացված նախագիծը նպատակ ունի նախապես կազմակերպել նոր ուսումնական տարվա աշխատանքները, ապահովել մանկավարժների աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ բաշխումը և ստեղծել պայմաններ ուսումնական գործընթացի կազմակերպված ու արդյունավետ մեկնարկի համար։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին ներկայացված դասաժամերի նախնական բաշխման նախագծի քննարկումը՝ նշելով, որ այն կազմվել է գործող իրավական ակտերի, հաստատության ուսումնական պլանի և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման պահանջներին համապատասխան։

Նշվեց, որ դասաբաշխման ընթացքում անհրաժեշտ է պահպանել արդարության, հավասարակշռվածության և մանկավարժական նպատակահարմարության սկզբունքները՝ հաշվի առնելով ուսուցիչների մասնագիտական համապատասխանությունը, աշխատանքային փորձը և ուսումնական ծանրաբեռնվածության արդյունավետ բաշխումը։

Արտահայտվողները ընդգծեցին, որ ներկայացված նախագիծը նախնական բնույթ է կրում և կարող է ճշգրտվել՝ պայմանավորված 2026–2027 ուսումնական տարվա ուսումնական պլանների վերջնական հաստատմամբ, 1–4-րդ դասարանների առարկայացանկի և ժամաքանակների հնարավոր փոփոխություններով, ինչպես նաև կազմակերպչական անհրաժեշտություններով։

Առաջարկվեց դասաժամերի վերջնական բաշխումը լրացուցիչ քննարկել մանկավարժական խորհրդի օգոստոսյան նիստում՝ իրավական և կազմակերպչական բոլոր պայմանների հստակեցումից հետո՝ ապահովելով ուսումնական գործընթացի արդյունավետ և անխափան կազմակերպումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխումը և տնօրենին ներկայացնել առաջարկություն (կցվում է)։

Լսեցին 9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) իրականացված աշխատանքների հաշվետվությունը՝ ամփոփելով տարվա ընթացքում կատարված հիմնական աշխատանքները, ձեռքբերումներն ու արդյունքները։

Նշվեց, որ ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են տարեկան պլանով նախատեսված ուսումնադաստիարակչական միջոցառումները, առարկայական և նախագծային աշխատանքները, բաց դասերը, առարկայական շաբաթները, մշակութային, հայրենասիրական, մարզական, բնապահպանական և ճանաչողական նախաձեռնությունները։

Զեկուցողը կարևորեց սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակությանը, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ուսումնական առաջադիմության բարձրացմանն ուղղված աշխատանքները։

Նշվեց, որ նախատեսված աշխատանքների հիմնական մասը իրականացվել է սահմանված ժամկետներում՝ դպրոցի վարչակազմի, մանկավարժների, դասղեկների, աշակերտական և ծնողական խորհուրդների համագործակցությամբ։ Կատարված աշխատանքները նպաստել են

ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և դպրոցական բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները բարձր գնահատեցին 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով իրականացված միջոցառումները՝ նշելով, որ դրանք կազմակերպվել են նպատակային, համակարգված և արդյունավետ կերպով։

Նշվեց, որ իրականացված ուսումնադաստիարակչական, մշակութային, հայրենասիրական, ճանաչողական, մարզական և այլ նախաձեռնությունները նպաստել են սովորողների բազմակողմանի զարգացմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացմանը։

Արտահայտվողները կարևորեցին դպրոցի վարչակազմի, մանկավարժների, դասղեկների, աշակերտական և ծնողական խորհուրդների համագործակցությունը՝ ընդգծելով, որ համատեղ աշխատանքի շնորհիվ հնարավոր է եղել ապահովել նախատեսված միջոցառումների արդյունավետ իրականացումը։

Միաժամանակ առաջարկվեց շարունակել և զարգացնել նախագծային ուսուցման, սովորողակենտրոն նախաձեռնությունների, կրթական այցելությունների և համագործակցային ծրագրերի իրականացումը՝ ավելի ակտիվ ներգրավելով սովորողներին դպրոցական կյանքի կազմակերպման գործընթացում։

Ամփոփելով՝ արտահայտվողները փաստեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի իրականացումը եղել է արդյունավետ և նպաստել է դպրոցի կրթական միջավայրի զարգացմանն ու սովորողների գիտելիքների, կարողությունների և արժեքային որակների ձևավորմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ աշխատանքների հաշվետվությունները, կատարված աշխատանքների արդյունքները (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին՝ 10. 2026-2027 ուսումնական տարում գնահատման կարգի փոփոխության քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարում Հանրակրթության պետական չափորոշչի շրջանակում գնահատման կարգում կատարված փոփոխությունները։

Նշվեց, որ նոր կարգավորումների համաձայն՝ 1–4-րդ դասարաններում, ինչպես նաև 5-րդ դասարանի առաջին կիսամյակում բոլոր առարկաներից միավորային գնահատում չի իրականացվելու։ Միավորային գնահատում չի նախատեսվում նաև 5–12-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա», «Անվտանգ կենսագործունեություն», «Արվեստ», «Երաժշտություն», «Կերպարվեստ» և «Արհեստ» առարկաներից։

Ընդգծվեց, որ նշված դեպքերում սովորողների ձեռքբերումների գնահատումն իրականացվելու է բնութագրման միջոցով, իսկ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին գնահատման արդյունքները կամփոփվեն սովորողի առաջադիմության բնութագրում՝ ներկայացնելով նրա գիտելիքները, կարողությունները և զարգացման ընթացքը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Մեթոդմիավորման անդամները կարևորեցին գնահատման նոր մոտեցումների միասնական և արդյունավետ կիրառումը՝ ընդգծելով, որ դրանք ուղղված են սովորողների անհատական առաջընթացի, կարողությունների և հմտությունների առավել ամբողջական գնահատմանը։

Նշվեց, որ բնութագրային գնահատման համակարգը կնպաստի սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, ինքնագնահատման հմտությունների զարգացմանը և ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը։

Առաջարկվեց իրականացնել իրազեկման աշխատանքներ ուսուցիչների, սովորողների և ծնողների շրջանում՝ գնահատման նոր կարգի պահանջների վերաբերյալ և ապահովելու դրա ճիշտ ու հետևողական կիրառումը։

***Որոշեցին*՝** Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարում գնահատման կարգում կատարված փոփոխությունները:

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում *Տարրական կրթության մեթոդմիավորումը* գումարել է *11 նիստ*, որոնց համար կազմվել է *11 արձանագրություն։*

Տարրական կրթության մեթոդմիավորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	22.08.2025	13
2	2	29.09.2025	7
3	3	23.10.2025	7
4	4	27.11.2025	6
5	5	24.12.2025	14
6	6	29.01.2026	11
7	7	26.02.2026	9
8	8	26.03.2026	7
9	9	21.04.2026	7
10	10	29.05.2026	10
11	11	26.06.2026	10

Տարրական կրթության մեթոդմիավորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է *84* էջից։

Մ/Մ նախագահ՝ _____ Ռ. Շալունց

«26» հունիսի 2026թ.